



ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ և ԱՌՕՐՅԱ ՊՐԱԿՏԻԿԱՆԵՐ

Հիմնախնդիրներ և մարտահրավերներ

Աղասի Թադևոսյան

- ✉ *Aghasi Tadevosyan*
- ✉ *Center for Gender and Leadership Studies*

Սույն հրատարակությունը ստեղծվել է Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության միջոցով: Այստեղ արտահայտված տեսակետները /կամ նյութի բովանդակությունը/ միմիայն հեղինակներին են և պարտադիր չէ, որ արտահայտեն ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները:

ԵՐԵՎԱՆ 2015

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....	3
1. Գենդերային անհավասարության և բռնության բնույթը առօրյա կյանքում	6
2. Անհավասարության և բռնության դրսևորումները առօրյա պրակտիկաներում.....	19
ա. Գենդերային անհավասարությունը տարածական պրակտիկաներում	
բ. Գենդերային անհավասարությունը ժամանակի կազմակերպման պրակտիկաներում	
գ. Գենդերային անհավասարությունը հագուստի պրակտիկաներում	
դ. Գենդերային անհավասարությունը սննդի պրակտիկաներում	
ե. Գենդերային անհավասարությունը խոսքի փոխանակման պրակտիկաներում	
զ. Գենդերային անհավասարությունը առօրյա աշխատանքներում	
3. Տղամարդը և կինը որպես առօրեականության հանգուցային նշաններ և դրանք ձևավորող էկվիվալենտները	37
4. Կին տղամարդ հանգուցային նշանների ու դրանց էկվիվալենտների տարատեսակները հայաստանյան հասարակությունում.....	41
5. Գենդերային անհավասարությունը և կոմունիկացիոն հարթակների հիմնախնդիրը	46
Եզրակացություններ և առաջարկություններ.....	50
Օգտագործված գրականություն	55

Ներածություն

Ամիսներ առաջ Գավառ քաղաքում ավարտվեց մի դատավարություն, որտեղ չնայած մեղադրյալը դատապարտվեց 1.5 տարի ազատազրկման, սակայն համաներմամբ հենց դատարանի դահլիճից էլ ազատ արձակվեց: Մեղադրյալը կնոջը սարսափելի ծեծի, խոշտանգման ու բռնության ենթարկած երիտասարդ մի տղամարդ էր: Այս դատը յուրահատուկ էր Հայաստանի համար, քանի որ մինչ այդ ընտանեկան բռնության որևէ դեպք նման հանրային հնչեղության չէր արժանացել: Այս դատավարությունը, որոշ առումով լակմուսային էր գենդերային անհավասարության ներկա իրավիճակը Հայաստանում բնութագրելու համար: Դատի ընթացքին հետևելիս այնպիսի տպավորություն էր ստեղծվում, որ եթե չլինեին կանանց իրավունքները պաշտպանող կազմակերպությունները, ապա հենց դատարանի դահլիճում էլ այդ կնոջը ամուսինը և նրա ընտանիքի անդամները կշարունակեին ծեծել ու անպատվել նրան, այն պատճառաբանությամբ, որ նա խայտառակ է անում իր ընտանիքը, ամուսնուն, բարեկամներին ու հարազատներին: Նույնիսկ դատը վարող դատավորների կեցվածքն այնպիսին էր, որ սրանք էլ, թեկուզ, բացեիքաց չէին արտահայտվում, սակայն լռելյալն մեղադրում էին այդ կնոջն իր արարքի համար, համարելով դա հայկական ընտանիքին անհարիր մի բան: Այն կարծիքը, որ կնոջը կարելի է գազանի նման ծեծել ու դրա համար անպատվաբեր է համարվում ամուսնուն դատի տալը, միայն ամուսնու հարազատների շուրթերից չէր հնչում, այլ՝ շատերի: Այդ թվում նաև Երևանից հատուկ դատին մասնակցելու նպատակով այդտեղ ժամանած և իրեն քաղաքական գործիչ և իրավապաշտպան ներկայացնող ինչ-որ մի փողկապավոր տղամարդուց: Ավելին, այդ տղամարդը կոչ էր անում գավառեցիներին միավորվել ու քշել դատարանի դահլիճից այն մի քանի իրավապաշտպաններին, ում ներկայությունը զսպում էր մնացածին այդ աղջկան հենց դատարանի դահլիճում հաշեհարդարի ենթարկելուց: Ազգային ավանդույթների ու ընտանեկան արժեքների պահպանման քարոզի տակ, այդ տղամարդը արդարացնում էր կնոջը խոշտանգած տղամարդուն ու հավելում, որ ամեն տղամարդ էլ իրավունք ունի իր կնոջը մեկ մեկ ապտակելու: «Հասմիկի քայլը կարելի է հերոսություն համարել, որովհետեւ նա չվախեցավ ասել, թե ինչ է կատարվել իր հետ: Կանանց շատ քիչ տոկոսն է դիմում կանանց կազմակերպություններ եւ էլ ավելի քիչ տոկոսը՝ բարձրաձայնում այդ մասին ԶԼՄ-ներով: Կանայք վախենում են, այն

խարանից, որ շրջապատում իրեն կմեղադրեն, որ բռնության է ենթարկվել»–նկատում է կանանց իրավունքների պաշտպաններից մեկը: (Քալաշյան 2014)

Այս դեպքը, բնութագրական է մեր ողջ հասարակության մի որոշակի մասի համար այն առումով, որ իրենց միջավայրում համատարած է այն կարծիքը, թե ամուսինը երբեմն կարող է կնոջը ծեծել, եթե «նա չափն անցնում է»: Այսինքն, բռնությունն ըստ ազգային ավանդույթների թույլատրելի մի բան է, որի կիրառումը կապված է կնոջ համար սահմանված այնպիսի մի չափից, ինչը նա չպետք է անցնի: Իսկ տղամարդը չունի նման չափ, քանի որ չափը որոշողը հենց ինքն է, տվյալ պահին, կախված իր տրամադրությունից ու բնավորության առանձնահատկություններից: Արդյո՞ք ծեծն ու բռնությունը ազգային այնպիսի արժեքներ են, որի պաշտպանությամբ հանդես են գալիս նույնիսկ քաղաքական գործիչները, դատավորներն ու քննիչները, տարատեսակ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ: Այս հարցի պատասխանը պարզ է դառնում, երբ փորձում ենք գենդերային անհավասարության հիմնահարցը հետազոտել առօրեականության մակարդակում: Առօրեականությունը դա այն հարթությունն է, որը թույլ է տալիս մեզ ուսումնասիրել կնոջ և տղամարդու փոխհարաբերությունները տարատեսակ պրակտիկաների մակարդակում, սկսած տարածության ու ժամանակի կազմակերպման, վերջացրած հագուստի, սննդի ու խոսքի փոխանակման պրակտիկաներով:

Գենդերային պրակտիկաների հետազոտման նման մտահղացումը առաջացավ, քանի որ վերը բերված դատավարության և շատ այլ բազմաթիվ օրինակներ ցույց տալիս, որ բռնությունն ու անհավասարությունը սկսվում է առօրեականությունից: Եթե մարդիկ արդարացնում են բռնությունն ու ծեծը առօրյա ճշմարտությունների ու գործողությունների մակարդակում, ապա սա լուրջ հիմնախնդիր է: Առանց այս դաշտում միջոցառումների, մնացած հարթակներում իրականացվող ծրագրերն ու միջոցառումները կմնան ոչ լիարժեք, քանի որ միևնույն է հասարակության լայն հատվածների կողմից կգնահատվեն որպես հակազգային և կմերժվեն առօրյա դիսկուրսների ու պրակտիկաների մակարդակում: Ահա թե ինչու նախաձեռնվեց այս հետազոտությունը և ինչու է այն նպատակ հետապնդում նկարագրել գենդերային անհավասարության դրսևորումները առօրյա պրակտիկաների ու դիսկուրսների մակարդակում:

Իր թեմատիկ առանձնահատկությամբ այս հետազոտությունը կարող է լրացնել մինչ այժմ արված այլ հետազոտությունների կողմից վեր հանված հիմնախնդիրների ու առաջարկությունների տարապատկերը, որոնք վերաբերում են գենդերային

հիմնախնդրի արտահայտվածությանը դասագրքերում ու կրթության ոլորտում (Մատուրյան 2013, Մատուրյան 2014a), աշխատանքում և գյուղական զբաղմունքներում (Գաբրիելյան 2014), սերիալներում (Գևորգյան, Կոջոյան 2014), քաղաքական դիսկուրսում (Մատուրյան 2014b), գենդերային ոլորտի վրա հետխորհրդային տրանզիցիայի ազդեցությանը (Ishkanyan 2003) և այլ խնդիրների:

Հետազոտությունն իրականացվել է որակական մեթոդով: Որպես հետազոտական տվյալների գրանցման մեթոդներ կիրառվել են անհատական խորացված հարցազրույցի, փորձագիտական հարցազրույցի և ներգրավված դիտարկման մեթոդները: Հետազոտական այս մեթոդներով գրանցված տվյալները հիմնարար են եղել վերլուծությունն իրականացնելու համար: Իրականացվել է ընդհանուր առմամբ 24 խորացված հարցազրույց և 12 փորձագիտական հարցազրույց:

Երևան քաղաքում իրականացվել է 12 խորացված և 6 փորձագիտական հարցազրույց: 6–ական խորացված և 3–ական փորձագիտական հարցազրույցներ են իրականացվել Գյումրի և Վանաձոր քաղաքներում: Որպես փորձագետներ ընտրվել են գենդերային հիմնախնդիրներում ներգրավված կազմակերպությունների ներկայացուցիչներ, այդ հիմնախնդրում մասնագիտացած վերլուծաբաններ և դասախոսներ: Խորացված անհատական հարցազրույցներն իրականացվել են տարբեր կրթական ու մասնագիտական ցենզ ունեցող կանանց ու տղամարդկանց հետ, այդ թվում և բռնության ենթարկված կանանց:

Դիտարկումներն իրականացվել են նշված քաղաքների զբոսայգիներում, սրճարաններում, հասարակական սննդի կետերում, փողոցներում, հրապարակներում և հանրային նշանակության այլ վայրերում:

Օգտագործել եմ նաև առցանց մամուլում վերջին վեց ամսում հրապարակված նյութերը, դրանց վերլուծելու համար օգտագործելով իմաստային կոնտենտ անալիզի մեթոդը: Կարևոր է եղել նաև երկրորդային աղբյուրների վերլուծությունը (desk research), որի ժամանակ հնարավոր է եղել ուսումնասիրել գենդերային հիմնախնդիրների շուրջ եղած հասարակագիտական և հատկապես մարդաբանական վերլուծությունները և այդ դիրքից հետազոտական տվյալները վերլուծելու հնարավորությունները: Այդ միջոցով մշակվել են այն մեթոդաբանական վերլուծական գործիքները, որոնք հնարավոր են դարձրել հետազոտական տվյալների խորքային վերլուծությունն իրականացնելու համար:

Հետազոտության համար վերլուծական հիմնական մոտեցումները մշակելու համար հիմնվել եմ Պ.Բուրդիոյի պրակտիկաների տեսության (Bourdieu 1984; Bourdieu

1992.), դիսկուրս անալիզի մեթոդաբանության (*Jorgensen; Phillips. 2002; Blommaert J. 2005.*) վրա, որպես վերլուծական գործիք օգտագործել եմ նաև Հ. Գարֆինկելի ֆոնային ակնկալիքների մասին տեսական դրույթը (*Garfinkel 2011. 54*): Տեսական առումով կարևոր նշանակություն են ունեցել նաև սոցիալմշակութային մարդաբանության մեջ առաջ քաշված գենդերային մարդաբանության ակադեմիական դիսկուրսի որոշ մոտեցումների, մասնավորապես սեռի բովանդակության առաջացման, կնոջ աշխատանքի դեվալվացման, գենդերային էսենցիալիզմի տեսական դրույթների ուսումնասիրումը (*Rubin 2011; Ortner 1996; Ortner 1974*): Աշխատանքի վերլուծական մեթոդի մշակման գործում հիմնարար դեր է խաղացել Պ.Բուրդիոյի «Տղամարդկային գերիշխանություն» աշխատությունում առաջ քաշված գաղափարները և կանանց ու տղամարդկանց աշխարհների ուսումնասիրության ու վերլուծության ցուցաբերված մոտեցումները (*Bourdieu 2001*): Գենդերն առօրեականության համատեքստում ուսումնասիրելու համար կարևոր տեսական մեթոդաբանական նշանակություն է ունեցել նաև Գ.Ջիմելի «Կանացի մշակույթ» (*Simmel 1984.*) և Մ. Հոլմսի «Գենդեր և առօրեականություն» աշխատությունները (*Holmes 2009*)

1. Գենդերային անհավասարության և բռնության բնույթը առօրյա կյանքում

Ըստ փորձագիտական և անհատական խորացված հարցազրույցների տվյալների Հայաստանում կին – տղամարդ փոխհարաբերությունները առօրյա կյանքում, հիմնականում, բնորոշվում են որպես անհավասար: Կախված հասարակական տարբեր միջավայրերի կրթական, մասնագիտական, լուսավորվածության, աշխարհայացքային, բնակության տարածքի առանձնահատկություններից այդ անհավասարությունը ավելի մեղմ կամ ավելի կոշտ ձևեր ունի: Երբեմն այն նկատվում է աշխատանքի բաժանման մեջ, երբեմն տարածության ու ժամանակի կազմակերպման, որոշ դեպքերում էլ խոսքի փոխանակման կամ որոշումների կայացմանը մասնակցության: Անհավասարության դրսևորումներ կարելի է նկատել ամենուր՝ սկսած ընտանիքից վերջացրած հանրային միջավայրերը: Ընդհանրապես, կարելի է առանձնացնել անհավասարության արտահայտված և թաքնված դրսևորումներ:

Անհավասարության թաքնված դրսևորումները հիմնականում այն դեպքերն են, որոնք համարվում են *բնական* և, այդ պատճառով էլ, ընդունելի են մեծամասնության համար որպես սովորական դարձած մի բան: Ըստ սոցիալմշակութային մարդաբանության մի շարք հետազոտությունների դրանք հաճախ գոյություն ունեն

այն պատճառով, որ չեն գիտակցվում և չեն ձևակերպված որպես անհավասարություն, (Rubin 2011; Bourdieu 2001; Ortner 1996; Ortner 1974; Foucault 1978): Նման օրինակներ կարելի է բերել առօրյայի համարյա բոլոր ոլորտներից: Ասենք այն, որ կինը ինչ-որ տեղ գնալիս պետք է տեղեկացնի տղամարդուն, իսկ տղամարդը կարող է նաև չտեղեկացնել կնոջը: Կամ, որ տղամարդը ցանկացած ժամի կարող է դուրս գալ որևէ հանրային տարածք, ինչպես օրինակ բակ, թաղի հավաքատեղի, գյուղամեջ, կամ նմանատիպ մեկ այլ տեղ, զրուցել այլ մարդկանց հետ, մնալ այնտեղ որքան որ կամենա, իսկ կնոջ համար դա համարվում է անթույլատրելի: Կամ ասենք, տղամարդը կարող է թիկնել բազմոցին և կնոջն ուղարկել ջուր բերելու, իսկ կինը նույն բանը չի կարող անել: Կամ ասենք մեկ այլ իրավիճակում տղամարդը հեռուստացույցի մոտ նստած կարող է խոհանոցից կանչել կնոջը, որպեսզի վերջինս իր ծխած սիգարետի մոխրամանը տանի, դատարկի, մաքրի և հետ բերի նորից դնի տղամարդու դիմաց: Իսկ կնոջ մտքով չի կարող անցնել նույնիսկ, որ ամուսնուն առաջարկի նմանատիպ մի բան իր համար անել: Սա բնորոշ է կենցաղի ցանկացած դրվագի, սկսած ճաշի սեղան զցելուց, վերջացրած տունը մաքրելը: Իդեպ, սա կարող է վերաբերել, ոչ միայն ամուսինների փոխհարաբերությանը, այլև՝ քույր ու եղբոր: Եվ նույնիսկ տղա երեխայի ու մոր փոխհարաբերություններին: Շատ դեպքերում մայրերը գիտակցված խրախուսում են տղաների նման վարքագիծը, որպեսզի յուրացնելով այդ պրակտիկան տղան դառնա այդ վարքագծի բնական կրողը: Իսկ հայրերը կամ սկեսրայրները սաստում են այն կանանց, ովքեր դեռահաս կամ նույնիսկ մանկահասակ տղաներին կարող են դիտողություն անել նման վարքագիծ դրսևորելու համար, համարելով որ այդ կերպ մայրը կարող է կոտրել տղայի տղամարդկային ոգին ու կամքը: Նույնը անում են աղջիկների համար, որպեսզի սրանք էլ կին – տղամարդ փոխհարաբերություններում յուրացնեն ենթակայական դիրքը: Անհավասարության մեկ այլ օրինակ կարելի է համարել այն, որ ասենք, տղամարդը կարող է ազատ տուն հրավիրել իր ընկերներին, կերուխում կազմակերպել, իսկ կինը նույն բանը չի կարող անել: Կարելի է բազմաթիվ նման օրինակներ բերել առօրյա կյանքից, երբ կնոջ ու տղամարդու անհավասարությունը համարվում է բնական մի բան և չի բնութագրվում որպես անհավասարություն: Դա դիտվում է որպես ընտանեկան կյանքի բնականոն մի դրվագ, ինքնստիմքյան ենթադրվող մի բան, ինչը այն կրողների, ոչ տղամարդկանց և ոչ էլ կանանց կողմից չի բնութագրվում որպես անհավասարություն: Սոցիալմշակութային մարդաբան Շերի Օրտները գտնում է, որ կնոջ դերի ստորադասումը տղամարդուն պատմական արմատներ ունի և անվանում է այն կնոջ դերի «դեվալվացում» (Ortner 1974. 68-87):

Որոշ շրջանակներում կնոջ ենթակայությունը տղամարդուն տարածում են ընդհուպ մինչև նրա սեռական կյանքի վերահսկողության ոլորտ, տարբերակելով տղամարդու և կնոջ սեքսուալության բնույթը և այդ տարբերության միջոցով կնոջ սեքսուալությունը ստորադասում տղամարդուն:

Իդեալ, անհավասարության դրսևորումները, որպես անհավասարություն սահմանելը ինքնին հանդիպում է լուրջ դիմադրության: Հիմնականում այդ դիմադրությունը գալիս է հատկապես այն հասարակական միջավայրերի կողմից, ովքեր երևույթների սահմանման հիմնական մենաշնորհը թողնում են ավանդույթին, առանց փորձելու սեփական քննադատական հայացք նետել դրանց վրա: Նման մոտեցում ունեցողները համարում են, որ պետք է ապրել այնպես ինչպես սահմանված է ավանդույթով: Եթե ավանդույթն այդ ամենը չի սահմանում որպես անհավասարություն, մարդիկ իրենք էլ չեն սահմանում դա, ընդունելով որպես բնական մի բան:

Անհավասարության դրսևորումների դեպքում հասարակության տարբեր խավերի մեջ մոտեցումները միանման չեն: Ըստ ներգրավված դիտարկումների և փորձագիտական հարցազրույցների տվյալների կին – տղամարդ անհավասարության դրսևորումները ծանրից դեպի թեթև, հիմնականում փոփոխվում են ըստ կրթվածության աստիճանի: Սակայն, այստեղ նշվում է մի շատ կարևոր նրբություն: *Առաջարկվում է տարբերակել կրթության աստիճանը լուսավորվածության աստիճանից:* Ըստ այդ դիտարկման, մարդը կարող է բարձրագույն կրթություն ունենալ, բայց չլինել լուսավորված: Սա շատ հերաքրքիր դիտարկում է: Այսինքն, խոսքն այստեղ վերաբերում է ոչ միայն պարզապես գիտելիք ստանալու խնդրին, այլ՝ աշխարհայացքի ու արժեքների փոփոխությանը, որովհետև *լուսավորվածության աստիճանը առաջին հերթին հենց արժեքների ու մոտեցումների վերանայման անհատական գիտակցված ունակությունն է*, ինչը որ ավանդական մշակույթի կրողների մոտ շատ թույլ է կամ բացակայում է, եթե նույնիսկ որպես մասնագետներ նրանք սովորել են և ստացել բարձրագույն ուսումնական հաստատության դիպլոմ: Լուսավորչական արժեքների կարևորությունը անհավասարության հաղթահարման մեջ կարևոր է, քանի որ այն անհատի մեջ ձևավորում է երևույթները դիտարկելու այնպիսի անհատական դիրք, ինչը տարբերվում է ավանդույթի կողմից անհատին հատկացվող դիրքից: Ավանդույթի տված դիրքը անհատին պարտադրում է մտածել մեխանիկորեն, տրված և բնական համարվող ճշմարտությունների համատեքստում: Անհատական դիրքորոշումը ավելի նպաստավոր է այն պատճառով, որ նման մոտեցում ունեցող մարդը մյուսներին էլ արդեն ընկալում և վերաբերում է որպես

անհատների, ում կարծիքը իր համար ավելի ռացիոնալ է դառնում, քան ավանդույթի կողմից սահմանված ճշմարտությունը: Այսինքն, նման փոխհարաբերության դեպքում կին – տղամարդ փոխհարաբերությունն էլ ընկալվում և տեղափոխվում է անհատական և բանական դատողության հարթություն, որտեղ արդեն ոչ միայն կարևորվում է դիմացինի սեռը և ավանդույթով սեռերի միջև սահմանված փոխհարաբերության ձևերի պահպանումը, այլ՝ դիմացինի անհատականությունը և այդ անհատականության հետ փոխադարձ հարգանքի և երկխոսության հիմքի վրա փոխհարաբերության կառուցումը: Այսինքն, եթե ավանդույթի կոնտեքստում գործ ունենք թե՛ կնոջ և թե՛ տղամարդու ենթակայությանը ավանդույթով սահմանված վարքի նորմին, որտեղ տղամարդու համար նախատեսված է *իշխողի*, իսկ կնոջ համար *ենթարկվողի* կարգավիճակները, ապա երկրորդ դեպքում՝ սեփական տեսանկյան իրավունք ունեցող և մեկը մյուսի տեսանկյան իրավունքը հարգող հավասար անհատների: Եվ եթե ավանդույթային մոտեցման դեպքում, սեռը, որպես նշան, ցուցում է տղամարդու գերակա և կնոջ ենթակա կարգավիճակների անհավասարությունը, ապա երկրորդ դեպքում, սեռը նշում է բացառապես այդ անհատի սեռային պատկանելությունը, չձևավորելով սեռով պայմանավորված գերակայության կամ ստորադասության գիտակցում: Նման փոխհարաբերության ձևը կամ դիսկուրսիվ էթիկան Յու. Հաբերմասն անվանում է ռացիոնալ, նկատի ունենալով որ այս պարագայում իմաստների կառուցումն ու փոխանակումը տեղի է ունենում կարգավիճակների ուղղահայացության ու աստիճանակարգի իռացիոնալ ճնշումից ազատ պայմաններում (Habermas 1993).

Այնպես, որ կախված լուսավորվածության աստիճանից, մեր հասարակությունում էլ որոշները ընդունելի են համարում, որ կանայք կարող են ինքնուրույն և ազատ լինել, իսկ որոշները՝ գտնում են, որ առանց տղամարդու թույլտվության նրանք իրավունք չունեն այդ անելու: Որոշներն էլ գտնում են, որ կինը ունի ինքնուրույնության ու ազատության իրավունք, սակայն այն պետք է սահման ունենա և սահմանն էլ պետք է որոշվի տղամարդու հետ համաձայնության գալու և նրա կարծիքի հետ հաշվի նստելու միջոցով:

Կանանց և տղամարդկանց անհավասարությունը, ինչպես նշվեց, ունի տարբեր դրսևորումներ: Դժվար է, իհարկե, դրանք տիպաբանելը, քանի որ կարելի է ասել, որ յուրաքանչյուր ընտանիքում դրանք շատ յուրատիպ են: Սակայն, խմբավորելու դեպքում կարելի է առանձնացնել չորս հիմնական տիպ, որոնք պայմանականորեն ես անվանել եմ *արդիական, անցումային, պահպանողական և ավանդույթային*:

Դրա ամենից փափուկ ձևը, *արդիականը*, կնոջ ինքնուրույնությունը ու ազատությունը ընդունող ձևն է: Այստեղ, չնայած, կնոջ անհատականության հանդեպ տղամարդու կողմից ցուցաբերվող բավականին հարգալից վերաբերմունքին, նրա ինքնուրույնության ու ազատության աստիճանը, սակայն, լիակատար չէ և ենթակա է տղամարդու հետ համաձայնեցման: Նման սկզբունքով առաջնորդվող ընտանիքներում կամ գույգերի մոտ կինը ակնհայտորեն ենթարկեցված չէ տղամարդու իշխանությանը, սակայն նա պարտավոր է համաձայնեցնել տղամարդու հետ իր քայլերը: Խոսքն այս դեպքում վերաբերում է ամուսնացած կամ սիրային գուգրնկեր ունեցող կանանց: Կարևոր է նկատել, որ նման կարգավիճակ ունեցող կանայք, գլխավորապես, սեփական անհատականության միջոցով ինքնահաստատված մարդիկ են, ովքեր իրենց փոխհարաբերությունները կառուցում են հիմնականում հենց նման անհատականություն ունեցող տղամարդկանց հետ: Այստեղ փոխհարաբերություններն ավելի շատ հավասարության սկզբունքով են կառուցվում: Սակայն, նույնիսկ նման դեպքերում նկատելի են տղամարդ և կին դերերի այնպիսի տարբերակումներ, որոնցում որոշ դրվագներում պահպանվում են մշակութային ընկալումները և կինը ոչ միշտ, բայց առանձին իրավիճակներում հայտնվում է անհավասար դիրքում: Ասենք օրինակ, երբ պետք է գործուղվել մի քանի օրով և բացակայել տանից, ապա կինը որոշում կայացնելու համար պետք է ձեռք բերի տղամարդու համաձայնությունը, իսկ նույն իրավիճակում տղամարդը կարող է ազատ որոշում կայացնել և ընդամենը կնոջը տեղյակ պահել, որ մի քանի օրով մեկնելու է գործուղման և բացակայելու է տանից: Նման փոխհարաբերություններում, չնայած անհավասարության ոչ ընդգծված և եզակի դրսևորումներին, բռնությունը բացառվում է համարյա թե ամբողջովին: Խոսքը վերաբերում է ինչպես ֆիզիկական, այնպես էլ հոգեբանական բռնության գործադրմանը: Նկատենք, որ ըստ գրանցած հետազոտական տվյալների, նման որակի փոխհարաբերություններ Հայաստանում քիչ են տարածված և կարելի է հանդիպել հիմնականում Երևան քաղաքում:

Անհավասարության մեկ այլ ոչ ընդգծված տիպ էլ կարելի է համարել կին – տղամարդ փոխհարաբերությունների այն ձևը, որն անվանել եմ *անցումային*: Տղամարդը կնոջը հիմնականում ներգրավում է ընտանիքում որոշումների կայացման ոլորտ, հաշվի նստում նրա խոսքի իրավունքի հետ, շատ դեպքերում օգնում կնոջը տան գործերում, այդ թվում, կատարելով որոշ աշխատանքներ, որոնք ավանդույթով համարվում են ոչ տղամարդկային: Սակայն, տղամարդուն է վերապահվում տան գլխավորի դերը և վիճելի իրավիճակներում վերջին խոսքի և որոշում կայացնելու իրավունքը: Այս տիպի հարաբերություններում նույնպես չեն հանդիպում ֆիզիկական

բռնության դեպքեր և բոլոր վիճելի հարցերը լուծվում են երկխոսության և քննարկումների միջոցով:

Երրորդ տիպը անվանել եմ *պահպանողական*: Այս տիպին մի կողմից, բնորոշ է կին – տղամարդ փոխհարաբերությունների տղամարդու գերիշխանության ընդգծվածությամբ ավանդական դերերի պահպանումը, մյուս կողմից, կնոջն ընտանիքի կառավարմանը, որոշումների կայացմանը մասնակից դարձնելը և նրա հանդեպ հարգալից վերաբերմունքի ցուցաբերումը: Այս փոխհարաբերության տիպում կինը բնութագրվում է որպես կարծիքի իրավունք ունեցող անհատ, ով սակայն որոշում կայացնելու վերջնական իրավունքը պարտավոր է թողնել տղամարդուն, առանց վիճարկելու տղամարդու այդ իրավունքը: Այս տիպի փոխհարաբերություններում տղամարդու և կնոջ դերերում հստակ պահպանվում են ավանդույթով սահմանված աշխատանքի բաժանումը: Այս փոխհարաբերության հիմքում ընկած է կնոջ և տղամարդու փոխադարձ հարգանքը մեկը մյուսի հանդեպ և փոխհամաձայնությունը ընտանեկան կարգ ու կանոնի և դերերի բաժանման շուրջ: Կինն այս փոխհարաբերություններում չնայած ունի որոշակի հարգանք և մասնակցություն ընտանեկան որոշումների կայացմանը, սակայն տարածության ու ժամանակի կազմակերպման, հագուստի և մնացած բոլոր պրակտիկաներում ինքնուրույն չէ և պետք է դրանցում միշտ հաշվի առնի տղամարդու կամքը: Այս տիպի փոխհարաբերություններում նույնպես բռնությունը տարածված չէ, սակայն նաև տեսականորեն չի բացառվում: Այսինքն, կարելի է ասել, որ կին – տղամարդ անհավասարության այս տիպը հիմնականում կառուցված է անհավասարություն վերարտադրող ավանդույթների վրա, սակայն դրանք պահպանվում են ոչ թե բռնության մեխանիզմների կիրառման, այլ՝ փոխադարձ պայմանավորվածության և համաձայնության: Այստեղ, չնայած, ավանդույթի կարևորմանը, հնարավոր է համարվում դրա նկատմամբ որոշակի քննադատական վերաբերմունքի ցուցաբերումը և նպատակահարմարության դեպքում ավանդույթից որոշ շեղումների հնարավորությունը: Որպես կանոն, նման իրավիճակներում որոշումը կայացնում է տղամարդը: Ավանդույթից շեղումները պետք է այնպիսին լինեն, որ հասարակական կարծիքում խոցելի չդարձնեն տղամարդու ունեցած կարգավիճակը:

Չորրորդ, *ավանդույթային* տիպում կին – տղամարդ անհավասարությունը բացառապես ավանդույթով պայմանավորված փոխհարաբերություն է, երբ թե կինը և թե տղամարդը պարտավոր են փոխհարաբերվել ոչ թե որպես ինքնուրույն անհատներ, այլ՝ ավանդույթը կրող օբյեկտներ: Որոշ վերլուծաբանների կարծիքով ավանդական տիպում, տղամարդուն տրված է սուբյեկտի, իսկ կնոջը՝ օբյեկտի

կարգավիճակ: Սակայն, իմ կարծիքով նման մեկնաբանությունը առաջացել է իրականության ոչ խորքային վերլուծության հետևանքում: Սուբյեկտը սովորաբար սեփական դիրքորոշումը ունեցող և այդ դիրքից հանդես եկող անհատն է, իսկ օբյեկտը՝ սեփական դիրքը չունեցողը և ուրիշի ստրատեգիաներն իրականացնողը: Իրականում, եթե ուշադիր վերլուծենք իրավիճակը, ապա թե տղամարդուն և թե կնոջը պարտադրվում են որոշակի դերակատարումներ: Պարզապես, տղամարդուն ավանդույթով պարտադրվում է լինել կոշտ, իշխող, ուժեղ և ավանդույթի կողմից տրվող ճշմարտությունները ներկայացնող օբյեկտ, իսկ կնոջը՝ հնազանդ, նուրբ, խոնարհ և ավանդույթի անունից տղամարդու կողմից ներկայացվող ճշմարտությունները կատարող օբյեկտ: Այսինքն, պատկերավոր ասած, թե տղամարդը և թե կինը այս տիպում օբյեկտներ են, սակայն, տղամարդը գործում է առաջին համարի տակ, իսկ կինը՝ երկրորդ: Իրականում նրանց երկուսին էլ ավանդույթի կողմից վերապահված է հասարակական կառույցների ու փոխհարաբերությունների հիմքում ընկած պատրիարխալ իշխանական համակարգի վերարտադրությունն իրականացնող գործիքների դեր: Հավաքված հետազոտական նյութերում հանդիպում են այս հարցի հետ կապված հետաքրքիր մեկնաբանություններ : Կանանցից մեկը նկատում է, որ տղամարդիկ էլ են մեղք, քանի որ շատ դեպքերում ստիպված են թաքցնել իրենց մարդկային շատ ցանկություններ ու պահանջմունքներ, որոնք որ ավանդույթը արգելում է տղամարդկանց, դնելով նրանց թույլ կամ ոչ իսկական տղամարդ համարվելու վտանգի տակ: Այդ պատճառով, շատ տղամարդիկ էլ գտնվելով մշակութային ավանդույթի ազդեցության միջավայրում ստիպված են պահպանում իշխող և կոպիտ տղամարդու իրենց դերը: Հատկանշական է, որ լինում են դեպքեր, երբ տղամարդը շեղվում է ավանդույթով իրեն վերապահված կոպիտ ու բռնի տղամարդու դերից, նրան ոչ միան տղամարդիկ, այլ հենց կանայք են դատապարտում ու ծաղրում, պիտակելով նրան ոչ իսկական տղամարդուն ավանդույթի կողմից տրվող այնպիսի անվանակումներով, ինչպիսիք են «ղզիկ», «կնիկ», «էշ» և տղամարդու համար ստորացուցիչ համարվող այլ պիտակավորումներ:

Այս առումով հատկանշական է Գյումրիում լսած մի պատմություն, երբ ամուսինը հաճախ տուն վերադառնալուց հետո բարձրաձայն հայեոյում էր կնոջը, իսկ կինը՝ խնդրում ամուսնուն իրեն չխփել ու գթասիրտ լինել: Սակայն, պարզվել է, որ իրականում այս ամենը բեմականացվել է ամուսինների կողմից, բնակարանի պատուհանի տակ հավաքված բակի տղամարդկանց համար, թաղի միջավայրում տղամարդու իր հարգն ու վարկը պահպանելու համար: Այս տրագիկոմիկական պատմությունը շատ ցցուն կերպով ցույց է տալիս ավանդութային տիպին պատկանող ինչպես տղամարդկանց, այնպես էլ կանանց օբյեկտային վիճակը:

Այս իրավիճակի հաղթահարման հնարավոր ուղիներից մեկը կարելի է համարել լուսավորչականությունը, ինչի հիմնական արդյունքներից մեկը պետք է համարել ոչ թե տղամարդու իշխանությունից կնոջ մեխանիկական ազատագրումը, այլ՝ տղամարդու ու կնոջ ազատագրումն ավանդույթի իշխանությունից և նրանց միջև փոխհարաբերության կառուցումը ոչ թե որպես մշակույթի գերակա ու ստորադաս կրիչների, այլ՝ որպես մշակույթը քննադատորեն ու ստեղծագործականորեն վերափոխող անհատականությունների: Այս պարագայում կնոջ ազատագրումը տղամարդու իշխանությունից կարող է դառնալ ինքստիներքյան ակնկալվող արդյունք:

Այսինքն, իմ պնդումն այստեղ այն է, որ տղամարդ-սուբյեկտ և կին-օբյեկտ մոդելը դա ոչ լիարժեք մեկնաբանություն է և իրականության մեջ պատկերը մի փոքր այլ է: Եվ քաղաքականության խնդիրը ոչ թե միայն կնոջ օբյեկտային վիճակի հաղթահարումն է, այլ՝ կնոջ և տղամարդու օբյեկտային վիճակի հաղթահարումը գուգահեռաբար:

Պահ է գալիս, դժվարանում եմ ասել, թե էդ առումով գենդեռային անհավասարություն կա թե չէ, քանի որ երկուսն էլ, ինձ թվում է, լավ ճնշված են, իրենց իսկ ինքնագնահատականի ցածր լինելու պատճառով: Հասարակությունը տղամարդուն էլ շատ բանից է զրկել, որովհետև ասում է. դու տղամարդ ես ու դու նույնիսկ իրավունք չունես քո զգացմունքները արտահայտել: Բայց ուժային առումով կինը միշտ ճնշված է լինում, որովհետև տղամարդը ուժը, իշխանությունը, վերահսկողությունը միշտ իր ձեռքից բաց չի թողնում:

ք.Գյումրի, կին, փորձագետ

Կարելի է եզրակացնել, որ կարևոր է խնդիրը քննարկել ոչ այնքան տղամարդ-սուբյեկտ և կին-օբյեկտ հակադրության, այլ՝ ավանդույթայնության և լուսավորչականության հակադրության կոնտեքստում, որի իմաստը դառնում է այն, որ անհրաժեշտ է ուշադրությունը կենտրոնացնել այն հիմնախնդրի վրա, երբ թե տղամարդը և թե կինը օբյեկտ են, որպես նպատակ դիտելով այնպիսի մի իրավիճակի ձևավորումը երբ և տղամարդը և կինը կազատագրվեն իրենց օբյեկտային վիճակից և կհարաբերվեն որպես սուբյեկտներ:

Երբ հասարակությունը չի ցուցաբերում կամք իր ավանդույթայնությունը լուսավորչության միջոցով հաղթահարելու, իհարկե, քաղաքականության առաջնային խնդիրը կանանց հանդեպ անհավասարության ու բռնությունների դեմ պայքարն է: Սակայն, պետք է գիտակցել, որ այն երկարատև արդյունքների չի կարող հանգեցնել,

Եթե քաղաքականությունը ռազմավարական առումով չի կառուցված ավանդույթայնություն–լուսավորչականություն հակադրության կոնտեստում:

Ելնելով նշվածից, առաջարկում եմ գենդերային անհավասարության ոլորտում քաղաքականությունների իրականացմանն ուղղված ծրագրերում, անհավասարության սուր դրսևորումների ու բռնությունների դեմ պայքարին և դրանց կանխարգելիչ քայլերի ձեռնարկմանը զուգահեռ, ավելացնել կին–տղամարդ փոխհարաբերություններին վերաբերող լուսավորչական արժեքների ու գաղափարների տարածմանն ուղղված միջոցառումների ծավալները:

Եթե փորձենք հիմնական գծերով բնութագրել ավանդույթի ձևավորած անհավասարության իրավիճակը և առանձնահատկությունները, ապա կարելի է ասել, որ այն հիմնականում դրսևորվում է խոսքի փոխանակության, կնոջ և տղամարդու հասարակայնորեն ընդունելի կերպարների, պատկերացումների, առօրյա պրակտիկաների և դիսկուրսների մակարդակում: Հետագա պարագրաֆներում դրանցից յուրաքանչյուրին կանդրադառնանք առանձին:

Տղամարդ և կին փոխհարաբերությունների հետաքրքիր եզրեր են բացվում նաև *հայր և աղջիկ, քույր և եղբայր, մայր և տղա* փոխհարաբերություններում:

Հայր և աղջիկ փոխհարաբերությունները կախված վերը ներկայացված տիպերից, շատ տարբեր են: Այստեղ կանդրադառնանք հիմնականում ավանդույթային ու պահպանողական տիպերին պատկանող փոխհարաբերություններին: Հայրը նման մոդելում հիմնականում մինչև աղջկա ամուսնանալը նրա վարքի ու առօրեականության վերահսկողությունը իրականացնող գլխավոր տղամարդն է: Որոշ բաներ նա փոխանցում է աղջկա եղբորը, եթե վերջինս տարիքով ավելի մեծ է լինում աղջկանից: Հիմնականում հոր կողմից վերահսկվում են աղջկա այն պրակտիկաները, որոնց միջոցով դատողություններ են արվում աղջկա սեքսուալ վարքագիծը բարոյական ընդունված նորմերի շրջագծում պահպանելու վերաբերյալ: Աղջկա վրա վերահսկողություն իրականացնելու գործում հորն ամենից հուզող հարցը, նրա սեքսուալության հանդեպ իշխանություն իրացնելն է: Դրա հիմնական նպատակը անել այնպես, որ աղջիկը չտնօրինի ինքն իր սեքսուալությունը: Դրա պատճառներից մեկն այն է, որ թաղային և ազգակցական համայնքների տղամարդկանց միջավայրում, նրա հարգվածության աստիճանը և տղամարդկային պատիվը չափվում է իր ընտանիքում ունեցած ավտորիտար իշխանության իրացման չափով: Եթե տղամարդն իր ընտանիքում չի կարողանում իշխել ընտանիքի անդամների վրա,

ապա նրա կարգավիճակը և նրա նկատմամբ հարգանքը համայնքում կարող է նվազել: Պատահական չէ, որ ներկայացված սոցիալմշակութային միջավայրերում աղջիկների համար կուսությունը պահպանելը բովանդակային մեկնաբանության մակարդակում նույնականացվում է հոր պատվի հետ: Ունենալ ազատ սեռական կյանք, այսինքն տիրապետել սեփական սեքսուալությանը, համագոր է պատվագուրկ (այսինքն տղամարդկային իշխանության առումով իշխանագուրկ) անել սեփական հորը և եղբայրներին: Կարելի է ասել, որ կնոջ սեռականության վրա իշխանությունը ընկալվում է, որպես, ընդհանրապես, տղամարդու իշխանության կարևոր պայման: Սա էլ դառնում է աղջկա սեռականության հանդեպ խիստ վերահսկողության գլխավոր պատճառը: Ընդհանրապես, աղջկա ինքնությունն ու ազատ վարքագիծը համարվում է հոր կողմից անընդունելի: Ավանդական ու ավանդութային մոտեցում ունեցող ընտանիքներում աղջիկների նույնիսկ հագուստի և ոճականության հարցերը հոր որոշելիքն են: Հայրը կարող է աղջկան արգելել կարճ հագնել, շպարվել, հագնել իր կարծիքով չափից դուրս նեղ շավար կամ անընդունելի բարձրության կրունկներով կոշիկներ և այլն: Հոր կողմից է կառավարվում նաև աղջկա ժամանակի ու տարածության պրակտիկաները: Ինչ-որ տեղ գնալը, ամենօրյա սովորական երթուղուց շեղումները, ինչ-որ ժամանցային վայր հաճախելը պետք է ամպայման իրականացվի հոր թույլտվությամբ: Նույնը վերաբերում է ժամանակի կազմակերպման խնդրին: Հայրն է որոշում, թե մինչև որ ժամը աղջիկը իրավունք ունի մնալ դրսում, նույնիսկ եթե նա չափահաս ու հասուն տարիքում է:

Երբեմն հորը փոխարինողի դերում հանդես է գալիս աղջկա մեծ եղբայրը: Նա պարտավոր է հոգ տանել քրոջ հանդեպ և ուղեկցել նրան տանից դուրս գալիս, իմանալ թե ում հետ հանդիպեց, ուր գնաց: Ցանկացած անթույլատրելի շեղում կարող է լուրջ քննարկման առարկա դառնալ և քրոջը դիտողության տեղիք տալ: Այստեղ նորից աղջկա հանդեպ վերահսկողությունը հիմնականում հանգեցվում է վերջին հաշվով նրա սեքսուալ վարքի կառավարմանը: Աղջկա հայրն ու եղբայրները պարտավոր են իրացնել իրենց իշխանությունը աղջկա սեքսուալության հանդեպ, որպեսզի պահպանեն իրենց դիրքն ու իշխանությունը համայնքում ընդհանրապես և, մասնավորապես, տղամարդկանց միջավայրում: Հաճախ քրոջ անձնական կյանքին վերաբերող հարցերը կարգավորվում են եղբոր կողմից, քանի որ քրոջ հանդեպ վերահսկողություն իրականացնելու եղբոր ունակությունը իր տարիքային խմբում հասարակայնորեն *“տղամարդ տղայի”* կարգավիճակը երաշխավորող կարևոր պայմաններից է:

Ամուսնացնելուց հետո, աղջկա հանդեպ իրավունքը փոխանցվում է աղջկա ամուսնուն և հոր ու եղբայրների իշխանությունը աղջկա սեքսուալության հանդեպ ստորադասվում է աղջկա ամուսնու իշխանությանը:

Նկարագրված սոցիալ-մշակութային բնութագիր ունեցող հասարակական միջավայրերում կնոջ ենթակայական կարգավիճակը ամուսնուն, զուգահեռվում է նաև ընտանիքում տղա երեխայի հանդեպ աղջիկ երեխայի ենթակայական վիճակին (Այս երևույթը բնորոշ է եղել XIX-XX դ. սկզբի հայկական ընտանիքին: Տես՝ Լալայան 1988. 132; Լալայան 2004. 159):

Բավական հետաքրքիր դեր է վերապահված եղբայրներին նաև աղջիկ հավանելու գործընթացում: Երբ աղջկան որևէ մեկը հավանում է, ապա ընդունված մեխանիզմներից մեկը աղջկա եղբոր հետ պայմանավորվածության գալն է և աղջկա հետ հանդիպում նշանակելու հարցում եղբոր թույլտվությունը ստանալը: Երբեմն, երբ աղջկա եղբայրը տարիքով փոքր է լինում, ապա թույլտվությունը տալիս է հայրը: Պատրիարխալ վարքուբարքով բորոշվող որոշ միջավայրերում հանդիպում են այս մեխանիզմի առավել ծայրահեղ դրսևորումներ: Այն դեպքերում, երբ աղջկան մի քանի տղա է հավանում, նրանք բոլորն էլ կարող են ստանալ եղբոր թույլտվությունը աղջկա հետ հանդիպելու: Սակայն, այստեղ նկատվում է լուրջ կուլիսային պայքար տղաների միջև: Նրանցից առավել ուժեղը, ճնշման տարբեր մեթոդներ, ընդհուպ մինչև ծեծով, սուրուղմփոցով ու ֆիզիկական բնույթի սպառնալիքներով, կարողանում է նախապես չեզոքացնել աղջկան հավանող բոլոր տղաներին և սահմանափակելով աղջկա ընտրելու իրավունքը դառնում է միակ թեկնածուն: Նմանատիպ հարաբերություններ են գործում նաև այլ մասկուլինային միջավայրերում, ինչպիսիք, ասենք, թաղի կամ կուրսի տղաների միջավայրն է, որտեղ նույնպես գեղեցիկ աղջիկների համար պայքարում մրցակցում են գլխավորապես ֆիզիկական ուժի ու ճնշման լծակներ գործադրելու և աղջիկների ընտրելու հնարավորությունները սահմանափակելու ճանապարհով: Հարկ է նկատել, սակայն, որ սովորաբար նմանատիպ վերաբերմունք հնարավոր է լինում ցուցաբերել այն աղջիկների հանդեպ, ովքեր իրենք էլ բավականաչափ ավանդութային ու պահպանողական են և աչքի չեն ընկնում անհատականության ու անձի ինքնահաստատվածության բարձր աստիճանով: Կայացած անհատականություն ունեցող աղջիկները, որպես կանոն կարողանում են հաղթահարել հայրերի ու եղբայրների իշխանությունը սկզբում իրենց ժամանակի, տարածության, հագուստի, ժամանացի ու ոճականության պրակտիկաների հանդեպ, իսկ հետո՝ նաև սեքսուալության: Իհարկե, սա հաճախ հանդիպող երևույթ չէ, սակայն հայաստանյան հասարակությունում աստիճանաբար իր տեղը գրավող մի բան է:

Այսինքն, կարելի է ասել, որ տղամարդկային իշխանությունը տարածվում է կանանց վրա ու ձևավորվում ի հաշիվ նրանց սեքսուալության հանդեպ իշխանության հաստատման: Դերակատարները տարբեր են, սակայն իշխանության աղբյուրը հիմնականում մեկն է՝ աղջկա սեքսուալության հանդեպ իշխանությունը: Որպես դերակատարներ կարող են հանդես գալ հայրը, եղբայրը կամ նրան հավանած տղան: Սակայն, բոլորի մտահոգությունը սեփական իշխանությունը պահպանելն է, քանի որ ավանդույթային նորմերին տուրք տվող հասարակության համար իշխանությունը տղամարդկային ֆենոմեն է: Իհարկե, կարևոր է նաև ուժային գործոնը: Ֆիզիկապես ավելի թույլ ու քիչ ազդեցիկ տղամարդիկ կարող են դուրս մնալ պայքարի այդ շրջանից: Եվ եթե բավականաչափ հարգված չլինեն թաղամասում, տղաների միջավայրում, ապա նրանց կարող են նաև շրջանցել քույրերի հետ հանդիպման թույլտվությունը ստանալու հարցում: Հետաքրքիր է, որ նման իրավիճակներում աղջիկների հետ հանդիպման թույլտվության իրավունք տվողի դերում հայտնվում են թաղամասի տղաները կամ կուրսի տղաները: Ամեն դեպքում, աղջկա հետ հանդիպելու իրավունքը ձեռք է բերվում տղաների միջավայրում լուրջ ուժային պայքարի արդյունքում և հիմնականում աղջիկների զգալի մասի կողմից դա ոչ միայն անհանդուրժելի է, այլ՝ հաճախ նաև ողջունելի: Այստեղ շատ էական է հասկանալ, որ նման մտածողության տեր աղջիկները իրենց հանդիպակած վարքագծով խրախուսում են ուժի ու այլ տղամարդկանց հանդեպ բռնության գործադրման միջոցով իրենց հետ հանդիպելու իրավունքի ձեռք բերումը և իրենց սեքսուալության հանդեպ իշխանության իրավունքը և տնօրինումը հանձնում են այդ ուժային պայքարում հաղթանակած տղաներին: Նրանք չեն հակնում, որ դրանով հանդերձ նրանք այդ տղաներին են հանձնում իրենց հանդեպ ընդհանրապես իշխանություն բանեցնելու իրավունքը, ինչը որոշ դեպքերում ստանում է բռնության տարբեր ձևեր, այդ թվում և, ֆիզիկական բռնության: Նշվածը բացառվում է այն աղջիկների դեպքում ովքեր, որ լինելով լուսավորված անհատականություններ, իրենք են իրենց սեքսուալության հանդեպ իշխանության կրողները: Հատկանշական է, որ նման դեպքերում, տղամարդիկ որոշ փորձերից հետո ձեռք են քաշում նման աղջիկների հանդեպ իշխանություն բանեցնելուց և այս աղջիկները հայտնվում են այդ փակ կենսակերպով ապրող, խմբային միջավայրերից դուրս: Նրանք, ըստ էության, դադարում են ապրել թաղային ազգակցական սոցիալական տարածքներում և տեղափոխում են իրենց կյանքը սոցիալական այլ տարածքներ, դետերիտորիզացնելով թաղային ու այլ տիպի փակ միջավայրերը: Հատկանշական է, որ փակ տարածքները, որոնք հիմնականում տղամարդկային են, աստիճանաբար դետերիտորիզացվում են հենց կանանց միջոցով, ովքեր որ կոտորում են հանրային

տարածքը որպես տղամարդկային տարածք ընկալելու ու գործադրելու պրակտիկաները և ձևավորում են հանրային տարածքները կանանց կողմից օգտագործելու նոր պրակտիկաներ: Այս խնդիրը հատկապես սուր է դրված գավառային բնակավայրերում և Երևանի արվարձանային թաղամասերում, որտեղ կնոջ սեքսուալության հանդեպ տղամարդկային իշխանության բանեցումը համատարած բնույթ ունի և իրականացվում է հիմնականում հանրային տարածությունները կանանց համար փակ պահելու միջոցով: Դրա հետևանքում կանայք ընդհանրապես չեն ստանում որևէ շանս իշխանություն ունենալու, այն պարզ պատճառով, որ իշխանությունը ձևավորվում ու վերարտադրվում է բացառապես հանրային տարածություններում:

Հետաքրքիր է նաև մայրեր և տղաներ փոխհարաբերությունների դիտարկումը: Հիմնականում մայրերը չունեն տղաների հանդեպ այն իշխանությունը, ինչը որ վերապահված է հայրերին աղջիկների հանդեպ: Տղաների սեքսուալությունը ընդհանրապես դուրս է մայրերի վերահսկողությունից: Այդ պատճառով տղաները ավելի ազատ են մեծանում: Մայրերը դեռահասության տարիքից ստանձնում են իրենց տղաների խնամակալի գործառույթը և հետագայում կիսում այն հարսների հետ: Այս դիտանկյունից շատ յուրահատուկ է հարս և սկեսուր փոխհարաբերությունը, որում սկեսուրները մի տեսակ ստանձնում են իրենց տղաների իշխանությունը հարսների հանդեպ իրացնելուն հետևողների ու վերակացուների գործառույթը: Նրանք ամեն կերպ փորձում են արգելափակել իրենց տղաների իշխանության հանդեպ հարսների «ոտնձգությունները», հաճախ դառնալով տղաների ու հարսների վիճաբանության ու տղաներին հարսների դեմ լարողը, որևէ կերպ թույլ չտալով, որպեսզի հարսները տղաների զգացմունքների վրա խաղալով կարողանան թուլացնել նրանց իշխանությունը ու զգոնությունը: Այս առումով, սկեսուրերը, չնայած սեռային պատկանելության առումով կանանց աշխարհում են, սակայն ֆունկցիոնալ առումով գործում են հիմնականում հոգուտ իրենց տղաների իշխանության իրացմանը: Եվ թվում է, թե ընտանիքն այն միակ տարածքն է, որտեղ կանայք կարող են իրացնել իրենց սեքսուալությունը, սակայն այստեղ է հարսների սեքսուալության և իշխանության սահմանափակողի դերում հանդես են գալիս տղաների մայրերը, դառնալով տղաների իշխանության պահպանման ու իրացման յուրօրինակ վերակացուներ:

2. Անհավասարության և բռնության դրսևորումները առօրյա պրակտիկաներում

Առօրյա պրակտիկաները դրանք այն երևույթներն են, որոնք օգնում են որոշակիացնել և հասկանալ առօրեականությունը ընդհանրապես: Որպես հետազոտական մեթոդ, այն հակադրվում է առանձնահատուկ ու յուրօրինակ փաստերի միջոցով իրականությունը կարևորելու ու նկարագրելու մոտեցումներին և հնարավորություն տալիս իրականությունը նկատել առաջին հայացքից շատ սովորական ու աննկատ թվացող երևույթներին ուշադրություն դարձնելու միջոցով: Գենդերի ուսումնասիրությունը առօրեականության միջոցով, թույլ է տալիս հասկանալ, թե ինչպես է ամենօրյա կյանքում սեռականությունը վերարտադրվում տարբեր, առաջին հայացքից սովորական համարվող և հաճախ չնկատվող գործողությունների մակարդակում (Holmes 2009. 19): Այս հետազոտության համար, որպես հետազոտական թիրախ ընտրել եմ տարածական, ժամանակի կազմակերպման, հագուստի, ուտեստի, խոսքի փոխանակության պրակտիկաները:

ա. Գենդերային անհավասարությունը տարածական պրակտիկաներում: Կին տղամարդ փոխհարաբերություններում հետաքրքիր հետազոտական տվյալներ են հանդիպում տարածության մեջ տեղաշարժվելու ու դիրքավորվելու սեռերի տարբերությունների վերաբերյալ: Դրանք մեր կյանքում տարածված և ամեն օր ու ամեն քայլափոխի մեզ հանդիպող երևույթներ են որոնց կարևորություն չենք տալիս չափից դուրս սովորական թվալու պատճառով: Տարածական պրակտիկաների հիմնախնդիրը պրակտիկաների տեսության մեջ առանցքայիններից է, որն ուսումնասիրում է տարածության սոցիալական կազմակերպման ու արտադրության, հանրային տարածքների ձևավորման ու օգտագործման, դրանց դասակարգային, գենդերային և այլ բազմաթիվ առանձնահատկությունները (Bourdieu 1984. 99-208; de Certeau 1984. 91-131):

Ըստ հետազոտական տվյալների կանանց և տղամարդկանց միջև անհավասարության ընդգծված դրսևորումները հանդիպում են հենց տարածության մեջ տեղաշարժվելու առիթներով: Կինը տարածության մեջ տեղաշարժվելու հարցում լիովին կախված է տղամարդու կամքից և տան սահմաններից դուրս ցանկացած տեղաշարժ նա պարտավոր է իրականացնել տղամարդու թույլտվությամբ:

Նախ, կնոջ համար կան ամենօրյա տեղաշարժի երթուղիներ: Ասենք օրինակ, այդպիսին համարվում են դասի կամ աշխատանքի գնալ գալու ճանապարհը: Ամենօրեա երթուղիներից շեղումներ թույլ տալու դեպքում կինը պարտավոր է ստանալ ամուսնու համաձայնությունը, աղջիկը հոր կամ եղբոր, սիրահար գույգերի

դեպքում նաև ընկերոջ: Հաճախ, կանանց այս կամ այն տեղ գնալու դեպքում միայնակ չեն թույլ տալիս գնալ: Նման դեպքերում ամպայման է տղամարդու ուղեկցությունը: Շատ դեպքերում այդ վերահսկողությունը իրականացվում է հոգատարության անվան տակ: Իդեալ, սա հեռու չէ իրականությունից, քանի որ որոշ մարզային բնակավայրերում կանանց միայնակ տեղաշարժը կարող է ուղեկցվել անձանոթ տղամարդկանց հետ կապված տհաճ միջադեպերով: Միայնակ կինը շատ հաճախ նման դեպքերում ընկալվում է «անտեր», ինչի նշանակությունը խորքային առումով կարելի է մեկնաբանել որպես տղամարդու իշխանությունից դուրս ինչ-որ մեկը, ում հանդեպ իշխանություն կարող է հաստատել մեկ այլ տղամարդ: Ի դեպ, սա միայն հայաստանյան երևույթ չէ և ընդհանրապես բնորոշ է պատրիարխալ հասարակություններին (Rubin 2011. 33-38): Ավելին, կան ծայրահեղ պատրիարխալ հասարակություններ որտեղ միայնակ կին կարող է բացարձակապես անապահով ու անպաշտպան վիճակում հայտնվել անձանոթ տղամարդկանց բռնության հանդեպ: Տվյալ դեպքում բռնություն իրականացնողը հաճախ չի համարվում մեղավոր, քանի որ մեղավոր է համարվում նա ով թույլ է տվել կնոջը, առանց տղամարդու վերահսկողության, հայտնվել այնպիսի տարածքներում, որոնք գլխավորապես տղամարդկային են համարվում: Մակայն, կնոջ ազատ տեղաշարժը վերահսկելու ու սահմանափակելու ամենից գործուն ձևը դա հասարակական կարծիքն է: Մարզային բնակավայրերում մարդիկ բոլորն իրար ճանաչում են: Հանրային տարածքներում, կանանց միայնակ հայտնվելը համարվում է պախարակելի մի բան և դառնում է խոսակցության ու քննարկումների առարկա հարևանության, բարեկամների, ծանոթների ու ընկերների միջավայրում: Բամբասանքի առարկա են դառնում ոչ միայն տվյալ կանայք կամ աղջիկները, այլև՝ այդ ընտանիքի անդամները: Հատուկ շեշտադրումներ են արվում հատկապես տղամարդկանց հասցեին: Աղջկան հաճախ սաստում են նման վարքի համար, ասելով, թե դու չե՞ս մտածում մարդիկ ինչ կխոսեն եղբորդ հասցեին: Այդ պատճառով էլ, արդեն աղջիկների սոցիալիզացիայի պրոցեսում սահմանափակվում է նրանց ազատ տեղաշարժը: Աղջիկների վարքի սահմանափակումները կապվում են հիմնականում հոր և եղբոր տղամարդկային պատվի հանդեպ աղջկա պատասխանատվության զգացումի հետ: Դա աղջկա սեռային ինքնության ու վարքի վրա ազդող առանցքային գործոններից է:

Հատկանշական է, որ Հայաստանում կան տարածքներ, որոնք համարվում են հիմնականում տղամարդկային: Դրանք հանրային տարածքներն են, որտեղ սովորաբար հավաքվում են տղամարդիկ և զրույցներ ունենում: Որպես կանոն կանայք հանրային տարածքներում հավաքատեղիներ չունեն: Նրանց հիմնական հավաքատեղին համարվում է բակը կամ տան տարածքը, որտեղ կանայք կարող են

հանդիպել և զրուցել «կանացի» թեմաներով, բամբասանք անել և տեղեկություններ փոխանակել:

Ըստ գրանցված նյութերի մարզային բնակավայրերից շատերում կանանց մուտքը հանրային շատ տարածքներ պարզապես արգելված է և նման տարածքներ կնոջ կամ աղջկա հայտնվելը համարվում էր անպատվաբեր այդ կնոջ/աղջկա ընտանիքի տղամարդկանց համար: Նման դեպքերում աղջիկը կարող է շատ խիստ պատժվել: Մարզային շատ բնակավայրերում անթույլատրելի է համարվում նաև միայնակ փողոց կամ զբոսայգի զբոսանքի դուրս գալը: Դա դիտվում է որպես անբարոյական վարքագիծ և տղամարդկանց ու տղաներին ուղղված հրավեր:

Շատ էական է նաև տեղաշարժման ձևը, քայլքի ոճը, արագությունը: Եթե աղջիկը դուրս գա փողոց պարզապես զբոսանքի և պտտվի բնակավայրի փողոցներով, ապա դա անընդունելի է:

Եթե տղամարդ էս , կարաս տանից դուրս գաս, ուշ ժամի տուն գաս, երբ ուզես գնաս, հետո բաներ կա կինը իրան չի կարող թույլ տալ. Օրինակ էս որ տղա լինեի, ամբողջ քաղաքը գիշեր – ցերեկ կֆոռայի, ամեն ծակ ու ճյուղ կիմանայի, շատ ունեմ հետաքրքրություն, ամեն ինչը կհետաքրքրվեի, կիմանայի, իսկ որ կին էս ու գիտես, որ էդտեղ տղերք են, էս չեմ էլ գնում:

Կին, 40 տարեկան, Երևան

Որոշ բնակավայրերում կանանց համար կան հասարակայնորեն ընդունելի զբոսանքի ժամեր և որոշակի կարճ երթուղիներ, որոնցով թույլատրելի է համարվում կանանց ու աղջիկներին խմբերով զբոսանքի դուրս գալը: Մակայն, դա կարևոր է, որ արվի թաղամասի սահմաններում, որտեղ հարևանները մեկը մյուսին ճանաչում են և վտանգ չեն զգում, որ կանայք կարող են օտար տղամարդկանց կողմից այս կամ այլ տիպի ոտնձգության ենթարկվել:

Շատ էական է նկատել, որ ավանդական ու պահպանողական ոճականությամբ ապրողների միջավայրերում հանրային տարածքները հիմնականում համարվում են տղամարդկային: Քիչ թե շատ մեծ քաղաքներում կան այսպես կոչված ընտանեկան սրճարաններ, որտեղ կարելի է այցելել կանանց ու աղջիկների հետ: Նման տեղեր կանայք կարող են նաև այցելել առանց տղամարդկանց ուղեկցության, երեխաների կամ բարեկամուհիների հետ միասին: Դրանք համարվում են այնպիսի միջավայրեր, որտեղ հասարակական կոնսետուսի համաձայն կանայք կարող են դուրս գալ և կազմակերպել իրենց ժամանցը, առանց ենթարկվելու օտար տղամարդկանց կողմից

որևէ ոսնձգության վտանգի: Մակայն, մնացած բոլոր ժամանցի վայրերը, որոնք կոչվում են հաց ուտելու տեղեր, հիմնականում տղամարդկային են: Ամեն բնակավայր, այս առումով ունի իր առանձնահատկությունը և հստակ հայտնի է, թե որ հաստատությունները տղամարդային տարածքներ են, որտեղ կանայք պարզապես մուտք չունեն: Հատկանշական է, որ նշված երևույթը նկատելի է նույնիսկ որոշ բարձրագույն ուսումնական հաստատություններում:

Գավառի պետական համալսարանի ուսանողուհիներ էին, ու մեկը ասում է “սոված ենք մնում”: Ասում եմ դուք շատ լավ ճաշարան ունեք համալսարանում, ինչի ես սոված մնում: Ասում է “գիտեք, էնդեղ ընդունված չէ, որ աղջիկները գնան, տղաներն են գնում, իսկ այդ դեպքում եթե հանկարծ ինչ-որ մի աղջիկ մտնի, էնքան փիս են նայում, որ մենք անհարմար ենք զգում և նախընտրում ենք սոված մնալ”:

ք. Երևան, փորձագետ, կին

Եթե ընդհանրացնենք ըստ սեռային հատկանիշի տարածական պրակտիկաների դիտարկումը, ապա կարելի է ասել, որ հիմնական տարածված պրակտիկաներն են, նախ որ կինը որևէ տեղ գնալուց ամպայման պետք է ստանա տղամարդու թույլտվությունը, իսկ տղամարդը ազատ է առանց կնոջ հետ համաձայնեցնելու ինքնուրույն ու ազատ տեղաշարժվել տարածության մեջ: Այս սահմանափակումը խախտելու դեպքում կինը կարող է ենթարկվել տարբեր կարգի պատիժների, ընդհուպ մինչև ծեծի ենթարկվելը: Իդեպ, այս սահմանափակումը վերաբերում է բոլոր դեպքերին, ընդհուպ մինչև սեփական ծնողների տուն այցելությունը, որը բացառվում է առանց ամուսնու թույլատրության: Տարածական պրակտիկաներում հանդիպող մյուս սահմանափակումը դա հանրային տարածքներում կանանց մուտքի արգելքն էր: Կարելի է ասել, որ ավանդական ու պահպանողական միջավայրերում հանրային տարածքները, որտեղ հատկապես իրականացվում էր խոսքի փոխանակություն, կանանց մուտքը խիստ արգելված էր: Ասենք օրինակ, կանայք չեն կարող դուրս գալ ու կանգնել այսպես կոչված «քուչում», իջնել «հայաթ», հավաքվել շենքերի անկյուններում կամ փողոցների խաչմերուկներում, խմբվել թաղի կենտրոնական մասում ու հետևել անցուղարձին, փողոցում կանգնած ժամերով զրույց անել միմիանց հետ ինչպես որ դա անում են տղամարդիկ մարզային բնակավայրերում կամ Երևանի արվարձաններում:

Կամ հանրային տարածքները տղամարդկային տարածքներ են, տղամարդիկ են որ ունեն էդ տարածքները, իրենք առանց մտածելու կարող են դուրս գալ օրվա որևէ մեկ ժամի. Առավոտը ժամերին կամ կեսգիշերին, իրենց մեջ էդ բնագոյային վախը չկա որովհետև մտածում են իրենց հետ ոչ մի բան չի կատարվի, որովհետև իրենք

տղամարդ են: Իսկ երբ որ կնոջն ա վերաբերում,ասենք կինը պիտի մի տեղ գնա մի քիչ ուշ, մի քիչ ամայի տեղ, ինքը մի երկու անգամ մտածում ա. Արժի գնալ? Կարողա մի բան պատահի իմ հետ?, կարողա վտանգավոր ա? ... մեզ սովորեցրել են, որ հանրային տարածքը կնոջ համար ապահով տարածք չի, դա քո տարածքը չի, էնդեղ տղամարդը կարող է գնալ, ինքը ապահով ա էնտեղ իրա տարածքն է ու հանկարծ եթե դու հայտնվեցիր էդ տարածքում, դա քու սխալն է, պիտի չհայտնվեիր, այսինքն հերիք չի որ դու կարողա բռնության ենթարկվես էդ տարածքում, բայց որ հայտնվեցիր, առաջին հարցը որ քեզ կտան, կասեն բայց ինչի էնտեղ էիր էդ ժամին, ի՞նչ էիր անում:

ք. Երևան, փորձագետ, կին

Այս առումով Երևանի ծայրամասերը էականորեն տարբերվում են կենտրոնական մասերից: Օրինակ. կենտրոնական հատվածներում գտնվող սրճարաններում, ակումբներում և ժամանցի այլ կենտրոններում որևէ խտրականություն չկա կանանց ու տղամարդկանց միջև: Սակայն, արդեն թաղամասային սրճարաններում, սննդի հաստատություններում հիմնական այցելուները տղամարդիկ են, ովքեր հավաքվում են այդտեղ իրար գլխի մի կտոր հաց ուտելու, ոգելից խմիչքներ խմելու ու տղամարդկային զրույցներ վարելու նպատակով: Նման վայրերում տղամարդիկ բացի ընթացիկ հարցերի շուրջ տեղեկատվություն փոխանակելը, քննարկում են նաև ճիշտ ու սխալին վերաբերող հարցեր: Սրանք այն տարածքներն են, որտեղ ձևավորվում ու վերարտադրվում են ավանդական ու պահպանողական արժեհամակարգով ապրող մարդկանց ճշմարտությունները, կյանքի համար կարևոր իմաստներն ու բովանադակությունները: Կարճ ասած, սրանք այն հանրային վայրերն են, որտեղ ձևավորվում են հասարակության այդ հատվածի կյանքն ու առօրեականությունը պայմանավորող իմաստները ու այդ իմաստների շրջանառությունն իրականացնող դիսկուրսները: Այստեղ լուծվում են թաղի անցուդարձին վերաբերվող հարցեր, քննարկվում սրա կամ նրա արարքները, կոնֆլիկտները, որոշվում ճիշտ ու սխալ լինելու հարցերը:

Փաստացիորեն, կարելի է ասել, որ միակ տարածքը որտեղ կանայք կարող էին առանց լուրջ սահմանափակումների գտնվել, դա տան տարածքն է: Իսկ հանրային տարածքները, հիմնականում տղամարդկային են: Այսինքն, փաստացորեն, կանայք հիմնականում դուրս են մղված հանրային այն տարածքներից, որտեղ տեղի է ունենում այդ հանրության համար նշանակալից խոսքի փոխանակության գործընթացները: Այս առումով կարելի է ասել, որ տարածական սահմանափակումները, հանգեցնում են խոսքի փոխանակմանը մասնակացության սահմանափակումների, ինչն էլ իր հերթին բերում է իմաստներ ու

բավանդակություններ, վերջին հաշվով ճշմարտություններ ձևավորելու խոսքային գործընթացներից կանանց մեկուսացմանը: Ընտանիքում էլ կնոջ խոսքը հիմնականում անտեսվում է և կարևորվում է տղամարդու խոսքի առաջնայնությունը: Նույնիսկ տղամարդու խոսքին ենթարկվող լինելը դիտվում է որպես կանացիության կարևոր բնութագրիչ: Կարելի է ասել, որ տարածության կազմակերպման պրակտիկներում կնոջ ու տղամարդու տարբերությունները անհավասարություն ձևավորող այնպիսի պրակտիկաներ են, որոնք վերջին հաշվով հանգեցնում են կնոջ հանդեպ տղամարդու գերիշխանության վերարտադրությանը ու կնոջ հանրային կարևորության ստորադասությանը:

բ. Գենդերային անհավասարությունը ժամանակի կազմակերպման պրակտիկաներում: Այստեղ կարևոր հարցն այն է, թե ո՞վ է որոշում, թե ինչպես կինը կազմակերպի և օգտագործի իր ժամանակը: Առօրյա կյանքում ժամանակի կազմակերպումը և իրացումը, դրանում գենդերային ասպեկտների դիտարկումը, օգնում է բացահայտել մի շարք անհավասարություններ, որոնք դասվում են «բնականների» շարքին: Այստեղ, հիմնական սահմանափակումները իրականացվում են տարածական պրակտիկաներում դրված սահմանափակումների հետ միահյուսված: Գլխավոր սահմանափակումն այն է, որ եթե կինը ունի որոշված ու տղամարդու հետ համաձայնեցված երթուղիներ, ապա այդ երթուղիներով անցնելը և տուն հասնելը սահմանափակված էր որոշակի ժամանակով: Ընդունված երթուղով, ասենք օրինակ դասից տուն հասնելը, կամ աշխատավայրից տուն հասնելը հստակ լիմիտավորված է և ժամային ցանկացած շեղման համար կինը պարտավոր է հաշվետու լինել ամուսնուն, աղջիկը՝ հորը կամ եղբորը: Առանց ամուսնու հետ համաձայնեցնելու, ժամային գրաֆիկի խախտումը կարող էր հանգեցնել հանդիմանանքների, իսկ որոշ դեպքերում նույնիսկ ֆիզիկական ճնշման ու բռնության:

Ժամանակային մյուս սահմանափակումը վերաբերում է ուշ ժամերի, կամ «մութ» ժամերի հիմնախնդրին: Աղջիկը «մութ» ժամին պետք է արդեն տանը լինի: Աղջկա կամ կնոջ համար այդ ժամերին փողոցում գտնվելը անվայելուչ է դիտվում: Սովորաբար աղջիկների վրա սահմանափակում է դրված հայրերի ու եղբայրների կողմից, որ երեկոյան ժամերին նրանք փողոց դուրս չգան: Հատկապես մարզային բնակավայրերում սա խիստ կերպով վերահսկվող հարցերից մեկն է: Ուշ ժամերին փողոցում գտնվելը կարող էր անպատվաբեր համարվել երիտասարդ աղջկա հոր ու եղբոր համար և մեկնաբանվել որպես բարոյականի սահմաններից դուրս արարք ու արժանաբալ համապատասխան պատժի: Ամուսնանալուց հետո այդ

սահմանափակումների վերահսկումը փոխանցվում է ամուսնուն: Եթե աղջիկն ունի փեսացու, ապա վերահսկողության իրավունքը տրվում է նաև նրան:

Ես մի հատ շատ ահավոր դեպք եմ հիշում. Մի երկու տարի առաջ, ուշ ժամի մի տանը հայրը վատացել է: Դեղը վերջացել է, հայրը խնդրել է աղջկան դուրս գալ, դեղատնից դեղն առնել: Էս աղջիկը զանգել է իր ընկերոջը, սա էլ չի թույլ տվել, թե ուշ ժամի ինչ գործ ունի մենակ գնա, սա էլ չի գնացել

ք. Երևան, տղամարդ, փորձագետ

Որոշ առավել ավանադապաշտ ընտանիքներում վերահսկվում է նաև կանանց ու աղջիկների քնից արթնանալու ժամերը: Ուշ արթնանալը դիտվում էր, որպես թափթփվածության, ալարկոտության նշան ու համարվում ոչ հարիր տան կնոջ կամ աղջկա համար:

Գ. Գենդերային անհավասարությունը սննդի պրակտիկաներում: Սննդի կազմակերպման պրակտիկաներում նույնպես առկա են հստակ տարբերություններ տղաների ու աղջիկների միջև: Այդ տարբերությունները դրսևորվում են ոչ այնքան կերակուրի տեսակների, այլ՝ սնվելու ձևերի մեջ: Հիմնականը, ինչ-որ չի ողջունվում, իսկ որոշ դեպքերում արգելված է կանանց, դա ոգելից խմիչքներն են: Մասնավորապես, խոսքը վերաբերում է օդուն: Օդին համարվում է տղամարդկային խմիչք, իսկ կանացի խմիչքները դրանք լիկյորներն են կամ գինին: Որոշ դեպքերում նաև կոնյակը: Իսկ սովորաբար կանայք ընդունված է որ չխմեն, որովհետև դա համարվում է անվայել բարոյական նորմալ կնոջ համար:

Երբեմն նաև որոշ տարբերակում է դրվում բուսական ու մսային կերակուրների միջև: Նշվում է, որ իսկական տղամարդը պետք է միս ուտի, հատկապես ոսկորով միս:

Կարծիք կա, որ տղամարդը պիտի միս ուտի, որ զգա տղամարդ ա, ոչ թե կնանոնց պես, որ սաղ օրը բանջարեղեն են ուտում: Ես շատ-շատ եմ սիրում արատ խմել, տարբեր կամպանիաներում, որ ես տղամարդկանց հավասար խմում էի, մտածում էին էս ով ա, ալկոհոլիկ ա: Եթե ես խմած եմ, էս ալկոհոլիկ եմ, բայց եթե տղամարդը քո չափ խմել ա, ինքը լավ տղայա:

ք. Երևան, կին, 31 տարեկան

Սակայն, սա այնքան էլ հաճախ հանդիպող մի բան չէ: Կերակուրներից տղամարդկային են համարվում խաշը, խորովածը և քյաբաբը: Չնայած այդ ամենը ուտում են նաև կանայք: Պատահական չէ, որ որոշ սննդի հաստատություններ, որոնք

որ մասնագիտացված են հատկապես նշված մասյին ուտեստների մեջ, հիմնականում տղամարդկային հավաքատեղիներ են: Խոսքը վերաբերում է խորովածանոցների ու քյաքաբանոցներին: Հատկանշական է, որ մինչև վերջին տարիներս գարեջրատները նույնպես համարվում էին տղամարդկային միջավայրեր: Սակայն, այս մոտեցումը կոտրվեց հատկապես Երևան քաղաքում փաբերի ի հայտ գալով, որոնք իրենց հետ բերեցին նաև ոչ միայն գարեջուր խմելու արևմտյան ներկա ավանդույթը, այլև՝ ժամանցի ձևը: Աստիճանաբար սովորական դարձավ, որ աղջիկները կարող են գնալ փաբ, խմել մինչ այդ տղամարդկային համարվող այնպիսի խմիչքներ, ինչպիսիք գարեջուրը, վիսկին, օդին, ռումը և այլն: Երևանում բավական տարածված է, որ նման հաստատություններ ազատ էլք ու մուտք ունեն նաև աղջիկներն ու կանայք, միայնակ կամ խմբով, դա էական չէ, քանի որ նման հաստատություններ այցելող տղամարդկանց համար էլ փաբը ընկալվում է արևմտյան կարգ ու կանոնի ժամանցային միջավայր, որտեղ ոգելից խմիչք խմող և ծխող միայնակ աղջիկը չի դիտվում որպես անբարոյական և սեքսուալ ոտնձգությունների պոտենցիալ «գոհ»: Այստեղ կարևոր մեկ այլ նորամուծություն էլ հաշիվը փակելուն է վերաբերում: Կանայք այստեղ իմնականում իրենք են փակում իրենց հաշիվը և թույլ չեն տալիս տղամարդկանց իրենց փոխարեն վճարել: Կնոջ նման վարքը անընդունելի է համարվում հատկապես այնպիսի հաստատություններում, որոնք աչքի են ընկնում տղամարդկային գերիշխանության ընդգծվածությամբ: Կնոջ կողմից հաշիվ փակելը համարվում է տղամարդու պատվի հանդեպ ոտնձգություն, քանի որ ցույց է տալիս տղամարդուց այդ կնոջ անկախությունը: Նման տղամարդը կարող է արժանանալ շրջապատի զարմացած հայացքներին և նույնիսկ քամահրանքին: Ի տարբերություն նման հաստատությունների, տղամարդկային համարվող սննդի կետերում կանանց մուտքը, նույնսիկ եթե տղամարդու հետ են այցելողները, առանձնապես չի ողջունվում:

Հատկանշական է, օրինակ այսպես կոչված *շաուրմայանոցների* դիտարկումը: Մի քանի տարի առաջ դրանց հիմնական այցելուները տղամարդիկ էին: Միայն վերջին տարիներին է, որ նման հաստատություններում կանանց մուտքը ընդունելի սկսվեց համարվել: Սակայն, այսօր էլ, Պոռշյան փողոցի որոշ խորովածանոցներ ու քյաքաբանոցներ դեռևս շարունակում են տղամարդկային սննդի կետեր դիտվել և միայն շփոթունքի դեպքում են, որ կանայք կարող են հայտնվել այդ հաստատություններում: Եվ այդ դեպքերում էլ նրանց ինչ-որ ձև հասկացնում են, որ այդ սննդի կետը տղամարդկային ժամանցի վայր է:

Ղե կարողա մտնես, բայց որ մտնում ես, նենց ահալոր վերաբերմունք ա, որ արդեն չես ուզում: Ավելի շատ քյաբարնոցներում են, Պոռոշյանի քյաբարնոցներում... Բայց դե նայած քյաբարնոց. Ասենք Արտաշնոց գնում են բոլորը, բայց էս Պոռոշյանի մոթելոտ քյաբարնոց գնում են ոչ բոլորը: Մի կին ինձ պատմեց, որ Ռ-ից իրա ընկերուհին էր եկել, ստիպել ա, որ գնան Պոռոշյանի ինչ-որ տենց մի մոթելոտ քյաբարնոց, մտել ասել են քյաբար ունեք, ասել են տո քյաբար էլ ունենք, սենյակ էլ ունենք: Սրանք դուրս են եկել, փախել են: Այսինքն գնում ես ու քեզ ամեն ձևով հասկացնում են, որ էս քո տեղը չէր:

բ. Երևան, կին, 29 տարեկան

Սննդի պրակտիկաներում մեկ այլ տարածված բաժանում էլ համարվում է սեղանի շուրջ կանանց ու տղամարդկանց առանձին նստելը: Գավառական միջավայրերում կանայք հաճախ առանձին են սեղան նստում, տղամարդիկ առանձին: Կանայք հիմնականում սեղանը սպասարկողի դերում են հանդես գալիս: Իհարկե, այս կոշտ բաժանումը ավելի փափուկ ձևեր է ստանում ավելի ժամանակակից համարվող ընտանիքներում, որտեղ կանայք տղամարդկանց հետ նստում են նույն սեղանին և սեղանի շուրջ ունեն տղամարդկանց համարյա թե հավասար կարգավիճակ: Իհարկե, այստեղ էլ կանայք հիմնականում սեղանը զցողի ու մատուցողի դերն են կատարում, սակայն դրանից հետո նստում են նույն սեղանի շուրջ: Իսկ գավառական շրջաններում կանայք բացառապես մատուցողի ու սպասարկողի դերում են, իսկ սեղանին նստած են միայն տղամարդիկ:

Ընդհանրապես, սննդի հետ կապված պրակտիկաներում կանանց վերապահված է պատրաստողի, մատուցողի, սեղանը հավաքողի ու ավսենները լվացողի դերը, իսկ տղամարդկանց՝ կերակուրը վայելողի: Այսինքն, դերային այս բաժանումը ակնհայտ է դաձնում սննդի պրակտիկաներում կին տղամարդանհավասարությունը:

Դ. Գենդերային անհավասարությունը հագուստի պրակտիկաներում:

Առօրեականության պրակտիկաների մեջ հատուկ տեղ ունեն հագուստի պրակտիկաները: Նախ, շատ հստակ տարանջատված են տղամարդու ու կանացի հագուստները: Երկրորդը, հատկապես գավառային բնակավայրերում հստակ սահմանված են նաև նորմալ տղայի հագուկապի, ոճականության հարցերը: Օրինակ, շատ նեղ ջինսե շալվարը, կամ գունավոր շալվարները, վառ գույնի վերնաշապիկները, չեն համարվում տղամարդուն վայել: Նույն կերպ նաև երկար մազեր ունենալը տղամարդկային չի: Այն տղամարդիկ ում հագուկապը խախտում է տղամարդու հագուստի ու ոճականության ընդունված սահմանափակումները, նա

կարող է ծաղրվել իր հագուկապի համար և անվանակրվել որպես «քույրիկ», «ղզիկ» կամ «գոմիկ»: Բոլոր դեպքում էլ պիտակավորումները կասկածի տակ են դնում տղամարդու սեռականությունը, ինչը տղաների համար անպատվաբեր է համարվում: Կարևոր է նաև մուգ կամ գորշ գույների պահպանումը: Հատկապես մարգային բնակավայրերում տղաների մոտ հագուստի խստությունը չափազանց կարևոր է համարվում և շեղումներ համարյա նկատելի չեն:

Ինչ վերաբերում է աղջիկներին ու կանանց, ապա հագուստի հարցում աղջիկները ենթարկվում են հայրերի վերահսկողությանը: Այդ վերահսկողությունն ավելի ուժեղ է ամուսինների կողմից կանանց հանդեպ:

Աղջիկը չի կարող կարճ կամ չգիտեմ, ոնց ուզի հագնվի ու դուրս գա, պետք ա անպայման հաշվի նստի եղբոր, ընկերոջ, հոր կարծիքի հետ: Մարզերում դա շատ ավելի վառ արտահայտված է, ու ոչ միայն ընտանիքում է արգելվում, այլ նաև համայնքում, որ ազատ չհագնվես կամ ուշ ժամի փողոցում չքայլես, որտեղ հաստատ բոլորը խոսելու են: Ու դա արդեն ստիպում ա, որ աղջիկները չդիմեն եղ քայլերին

Ք. Երևան, կին, սոցաշխատող

Հետաքրքիր է, որ նայելով կանանց հագ ու կապին, դժվար է ասել, որ նրանք խիստ ավանդական ձևերով են հագնվում, կամ նախընտրում են մարմնի բարեմասնությունները չճշտադրող և թաքցնող հագուստ: Հակառակը, աղջիկները և նույնիսկ կանայք կարող են հագնվել շատ սեքսուալ, նեղ տաբատներ, բավական բաց վերնաշապիկներ: Սակայն, հետաքրքիրն այն է, որ նույնիսկ այդ պարագայում կան ընդունված հագուստի ձևեր և կան արգելված ձևեր: Հայրերի ու եղբայրների դերը նրանում է, որ կանանց ու աղջիկներին պահեն ընդունվածի սահմաններում և թույլ չտան ինքնազուլի կերպով հագնվել: Եթե աղջիկը նույնիսկ շատ սեքսուալ նեղ շալվար է հագնում, ապա հոր թույլտվությունը համարյա միշտ պարտադիր է: Այստեղ ըստ էության, կարևորը ոչ այնքան այն է, որ կանացի հագուստը լինի համեստ և նրա սեքսուալությունը թաքցնող, այլ՝ այն, որ համապատասխանի այն ձևերին ինչը որ համարվում է ճիշտ հագուստի ձև: Որ կանայք ամպայման պետք է ստանան տղամարդկանց թույլտվությունը իրենց հագուստի հարցում, առաջին հերթին այն բանի արտահայտությունն է, որ տղամարդիկ են հասկանում (*չոկում*) որոշում, թե որոնք են հասարակությունում հագուստի ընդունված ճիշտ ու սխալ ձևերը և որոնք թույլատրելի են, իսկ որոնք՝ ոչ, պայմանավորված է հենց այդ ճշտի ու սխալի սահմանների պահպանմամբ: Այսինքն, հագուստի առօրյա պրակտիկաների գենդերային ասպեկտի դիտարկումները թույլ են տալիս ասել, որ ըստ ընդունված

մտայնության տղամարդիկ են ճիշտ ու սխալի գիտակները, այլ՝ ոչ թե կանայք: Այդ պատճառով էլ նրանք են որոշում թե կանայք ինչ հանգնեն ու ինչ չհագնեն:

Հետաքրիքը է, որ որոշ փորձագետների կարծիքով կնոջ վրա ճնշում կա նաև պաշտոնական, կամ աշխատաքային դրես-կոդի դեպքերում: Այստեղ հաճախ կանայք պարտավոր են կրել կամ տղամարդկային ոճից փոխառված կոստյումային ոճը, կամ էլ թե չէ տղամարդ շեֆերին հաճո «գործավար-քարտուղարուհու»:

Օրինակ ինձ համար շատ զարմանալի է, որ կինն իր պաշտոնում նույն ձևով է դրսևորվում, ինչպես տղամարդը. Նույնիսկ հագուստի տարրերի մեջ: Էդ կոստյումը, բան, լրիվ առնականացման տարրեր են, սսենք կանացի մի էլեմենտ դնում են, օր.կրծքազարդ, որ ցույց տան, որ իրենք կին են ամեն դեպքում, բայց էլի առնական ձևով են էդ ամեն ինչը մատուցում: Ես ինքս միշտ խնդիր եմ ունենում. Սսենք, գնում եմ ինչ-որ պաշտոնական հանդիպման, ինչի էս չեմ կարող ինչ-որ սիրուն շորիկ հագնեմ, այլ պետք է dress code-ով շարժվեմ, որ ընդունված է տղամարդկային աշխարհում, որպեսզի ինձ լուրջ ընդուն են:

ք. Երևան, կին, փորձագետ

Ե. Գենդերային անհավասարությունը խոսքի փոխանակման պրակտիկաներում

Ըստ հետազոտական նյութերի կին – տղամարդ փոխհարաբերություններում հակասություններ ու բախում առաջացնող առանցքային գործոններից մեկը խոսք ասելու իրավունքն է: Հատկապես ավանդական կենսակերպին հակված միջավայրերում բնորոշ է կնոջը խոսքից զրկելու, կնոջ խոսքը սահմանափակելու կամ կնոջ խոսքը խոսք չհամարելու պրակտիկաները: Հետազոտության ընթացքում գրանցված նյութերը վկայում են տարբեր դեպքեր կնոջ խոսքի վրա սահմանափակումներ դնելու: Շատ դեպքերում, կնոջ հանդեպ տղամարդու բռնության կիրառման պատճառը դառնում է

- տղամարդու խոսքին չհնազանդվելը,
- տղամարդու խոսքի ճշմարտացիությունը վիճարկելը:
- տղամարդկանց խոսակցությանը խառնվելը
- սեփական կարծիքը հայտնելը:

Տղամարդու խոսքին հնազանդվելը համարվում է կանացիության կարևոր հատկանիշներից մեկը: Ինչպես արդեն վերը ներկայացվել, լավ կինը չպետք է ամուսնու խոսքը անտեսի և ինքնազուլիս քայլերի դիմի: Ավանդական ոճով ապրող

ընտանիքներում տղամարդու խոսքին հնազանդվելը համարվում է այն ակնկալվող վարքագիծը, որը կինը պետք է ցուցաբերի ինչպես ընտանիքում, այնպես էլ հանրային միջավայրերում տղամարդկանց հետ հաղորդակցվելու պարագայում: Այս ակնկալիքը չարդարացնելու և կնոջ կողմից այլ վարքագծի ցուցաբերումը կարող է դառնալ ընտանեկան կոնֆլիկտի պատճառ: Նման դեպքերում կինը կարող է ենթարկվի խիստ հանդիմանանքի տղամարդու, որոշ դեպքերում նաև նրա ընտանիքի մյուս անդամների կողմից: Ոչ միշտ, բայց երբեմն էլ կնոջ նման արարքը կարող է ավարտվել ոչ միայն հանդիմանանքով, այլև, այսպես կոչված, «դաստիարակչական թեթև ծեծով»՝ մեկ երկու աստակով: Չի կարելի է ասել, որ ավանդական և սովորության նորմերի մթնոլորտում ապրող հասարակական միջավայրերում նման դեպքերի համար կան վարքի հստակ գծված մոդելներ, սակայն տղամարդու խոսքին չհնազանդվելը համարվում է ընտանեկան բարքերի կոպիտ խախտում և ենթակա է կանոնակարգման սկսած խոսքային, վերջացրած ֆիզիկական ճնշում գործադրելու տարբեր եղանակներով:

Տղամարդու խոսքի ճշմարտացիությունը վիճարկելը համարվում է սովորության նորմի ավելի կոպիտ խախտում: Այս դեպքում պախարակելի է համարվում այն, որ կինը ոչ միայն չի ենթարկվել ամուսնու խոսքին, այլ՝ ավելին, փորձ է անում վիճարկել դրա ճշմարտացիությունը և առաջ քաշել իր խոսքի ճշմարտացիությունը: Նման վարքագիծը դիտվում է տղամարդու իշխանությունը թուլացնելուն ուղղված ոտնձգություն, քանի որ բացի այն, որ կինը չի ենթարկվում տղամարդուն, իրենը տղամարդուց ավելի բարձր դասելով նա ստորակարգում է տղամարդուն:

Ինչ վերաբերում է տղամարդկանց խոսքին չխառնվելուն, ապա սա նույնպես շատ տարածված է և դրսևորորվում է, թե առաջնային և թե ֆոնային պրակտիկաների ձևով: Կին – տղամարդ փոխհարաբերություններում խոսքի փոխանակման այս պրակտիկայի տարատեսակ կարելի է համարել այն, որ կնոջ հետ տղամարդիկ հաճախ հրաժարվում են քննարկել հանրային բնույթի հարցեր: Նման իրավիճակներում, երբ կանայք փորձ են անում խոսակցության կողմ դառնալու, տղամարդիկ պարզապես հրաժարվում են նրան երկխոսության կողմ ճանաչել:

Էս վերջերս մի ակտիվիստ կնոջ հետ եմ խոսում, որը մենակ մի գյուղում է ապրում: Իրենց տան կողքը մեքենա էր շրջվել, ինքը դուրս է եկել, որ ասի ոստիկանություն կկանչի, էստեղ տղամարդիկ ասել են. «դու ներս գնա, թող տղամարդ գա, ուր և տղամարդու, որ դու ես դուրս եկել խոսալու մեզ հետ»:

Հատկանշական է, որ հաճախ կնոջ խոսքի սահմանափակումները պայմանավորված են ոչ թե այն հանգամանքով, որ կինը սխալ է եղել կոնկրետ իրավիճակում, այլ՝ որ պարզապես նա խախտել է տղամարդու խոսքի հանդեպ հարգալից վերաբերմունքը: Այսինքն, տեսնում ենք, որ նման դեպքերում գործ ունենք ավանդույթի պահպանման բացարձակ իռացիոնալ դրսևորումների հետ, որտեղ ավելի կարևոր է համարվում կնոջը ենթակայական վիճակում պահելը, քան ստեղծված իրավիճակում առավել արդյունավետ լուծում գտնելը:

Խոսքային պրակտիկաների առումով, աղջկան ներկայացվող *ֆոնային ակնկալիքն* այն է, որ նա պետք է սուս մնա, իսկ տղայինն՝ այն, որ նա պետք է մեծ մեծ խոսա: Դրա համար, փոքր տղաները ավելի շատախոս են լինում քան աղջիկները: Որովհետև մայրերը աղջիկներին միշտ ասում են սուս մնա, քիչ խոսա, ձենդ կտրի, իսկ տղաներին հակառակը միշտ խրախուսում են շատախոսության համար, ժպտում, ծիծաղում կատակում և այլ ձևերով նրա հանդեպ ձևավորում են այնպիսի ֆոնային ակնկալիք, որ նա պետք է խոսի ու կարծիք հայտնի:

Ղե ընտանիքում դաստիարակությամբ ա դա դրվում. Մտածում են դե տղան ա, ինքը պիտի խոսա, ինքը պիտի ասի, իսկ աղջկա համար՝ աղջի դու սուս: Հետո էդ տղան իրա ծնողներից ա սովորում, որ պիտի ասի աղջի դու սուս: Աղջիկն էլ արդեն սովորել ա, որ իրան անընդհատ ասում են սուս, հետո որ իր ամուսինն ա ասում. աղջի դու սուս, իրա համար դա նորմալ բան ա: Ինքը դա ընկալում ա որպես ավանդապես եկած մի բան: Դա ավանդույթն ա, ինքը պարտավոր ա ենթարկվելու, մեր ազգը դրա հիման վրայա գոյատևում:

ք. Երևան, կին, 27 տարեկան

Որոշ դեպքերում բռնության պատճառ է դառնում կնոջ կողմից սեփական կարծիքը հայտնելու արգելքը խախտելը: Ճիշտ է, սա ողջ հասարակությունում տարածված դեպք չէ, սակայն այն միջավայրերը, որոնցում կին – տղամարդ փոխհարաբերություններում առկա է ավանադույթով պաշտպանվող ընդգծված անհավասարություն, ապա սեփական կարծիք հայտնելը նույնպես չի ողջունվում:

Շիրակի մարզի գյուղերից մեկում տարիքով մարդը խրատում է ավելի ջահել մեկին. Տարիքով ասածը մի 65-70տ է, իսկ կոնկրետ էտ կնոջ ամուսինը 42 տարեկան: Ասում է. «հլը տար տուն, ծեծի մի հատ, էս ինչ է իրեն երևակայե, որ ելել է դուրս, մի հատ էլ խորհուրդ է տալիս մեզ»: Գազատարի անցկացման խնդիր էր, էս ականատես եղա էդ վիճակին: Կինը խնդրում էր որ գազատարը իրոք ավելի հարմար տարբերակով

անցկացնել: Վերջն էդ թաղի տարիքով մարդը բորբոքվեց. «հլը տար տուն, էդ ինչ իրանից կներգայացնե օր, քիչ կծեծես, ըդորից է»:

ք. Գյումրի, տղամարդ, մանկավարժ

Խոսքն այն միջոցն է, որով սահմանվում են մարդկանց փոխհարաբերությունների և գործողությունների հիմքում ընկած իմաստներն ու նշանակությունները: Խոսքի միջոցով են սահմանվում ու տարանջատվում ճիշտն ու սխալը, որոնց մասին պատկերացումները հիմնարար դեր են խաղում նաև առօրյա կյանքում: Այն ինչ համարվում է ճիշտ և ընդունվում է հասարակության կողմից կողմնորոշում է նաև տղամարդկանց ու կանանց փոխադարձ հարաբերությունները: Մեր հասարակության որոշակի շրջանակներում կնոջ խոսքին երկրորդական նշանակություն տալը, որոշումների կայացման մեջ դրան կարևորություն չտալը կամ կնոջը խոսքի իրավունքից զրկելը տղամարդու գերիշխանությունը վերարտադրելու կարևոր մեխանիզմներից մեկն է: Միշել Ֆուկոն նշում է, որ իշխանության արտադրության գործընթացը շատ որոշակիորեն կապված է ճշմարտության արտադրության հետ: Նրանք, ովքեր որոշում են թե ի՞նչն է ճիշտ ու ինչը սխալ, նրանք էլ տիրապետում են իշխանությանը (Foucault 1998. 95-96) Այս դեպքում, մեր հասարակության հատկապես պատրիարխալ արժեքներով առաջնորդվող միջավայրերում խոսքի սահմանափակումները հիմնական այն մեխանիզմներից են, որոնք թույլ են տալիս պահպանել և վերարտադրել տղամարդու գերիշխանությունը: Մեփական կարծիքը խոսքի միջոցով ներկայացնելը ճշմարտության արտադրությանը մասնակցելու հիմնական միջոցն է: Կնոջ մասնակցության սահմանափակումները նրան օտարում են ճշմարտությունների արտադրության ու վերարտադրության գործընթացներից, դարձնելով դա բացարձակապես տղամարդկային մենաշնորհ: Կանանց այդ գործընթացներից մեկուսացնում են նախ փափուկ ուժի՝ ավանդույթի միջոցով: Իսկ եթե հանկարծ, փափուկ ուժը չի գործում, ապա կարող է գործի դրվել նաև կոշտ ուժը, որը դրսևորվում է արդեն բիրտ ուժի գործադրման ու ծեծի ձևով: Իդեպ, կնոջ խոսքի սահմանափակումները բավական տարածված են եղել նաև մեր ավանդական մշակույթում և ունեցել են ամենից ծայրահեղ դրսևորումները, ընդհուպ մինչև չխոսկանության ավանդույթը (Լալայան 1983. 178: Լալայան 1988. 133: Լալայան 2004. 158: Նահապետյան 2004. 96-97): Կնոջ հանրային վայրերում խոսք ասելու, զրույցների մասնակցելու, տղամարդկանց հետ զրույցի բռնվելու սահմանափակումները այսօր էլ որոշակի հասարակական մշակութային միջավայրերում բավական տարածված երևույթներ են:

Իշխանության և դիսկուրսի տեսության մեջ ընդունված կարծիք է, որ նշանակությունների արտադրության շնորհիվ գոյություն ունեցող իշխանական հարաբերությունները կարող են թվալ այնքան բնական, որ դրանք նույնիսկ կասկածի տակ չեն դրվում (Jorgensen, Phillips 2002. 66): Այս թեզը հստակ նկատելի է ոչ միայն քաղաքական վերնախավերի կողմից հասարակության մնացած խավերի հանդեպ գերիշխանության հաստատման ու վերարտադրության պարագայում, այլ իշխանության ցանկացած ձևերում, այդ թվում և տղամարդ-կին փոխհարաբերությունում տղամարդու հաստատած իշխանության պարագայում: Հետազոտության նյութերը նույնպես ցույց են տալիս, որ տղամարդու կարծիքին առավելություն տալն այնքան արմատավորված ու բնական է թվում, որ ոչ միայն ավանդական պատրիարխալ նորմերով ապրող միջավայրերում, այլ՝ մարդու իրավունքների դիրքից պայքարող քաղաքացիական ակտիվիստների մեջ են նկատվում նման դրսևորումներ.

Երբ նույն բանը և տղամարդն է ասում և կինը, տղամարդու ասածն ավելի շուտ են ընկալում կամ ընդունում, քան կնոջը: Ու շատ դեպքերում դա ենթագիտակցորեն է արվում: Օրինակ, վերջերս մեր ակտիվիստների մեջ էլ նկատեցի: Ասում եմ, մի բռնակ, էդ նույն բանը նոր մի քիչ առաջ կին ասեց, էդ ինչի չընդունեցիք, հենց տղամարդ ասեց, ընդունեցիք: Նոր իրենք իրենց բռնեցնում են էդ մտքի վրա:

ք.Երևան, կին, փորձագետ

Խոսքի իրավունքը շատ կարևոր է համարվում այն պատճառով, որ դրա միջոցով կայացվում են այն որոշումները, որոնք որ պրակտիկաների մակարդակում պետք է իրականացվեն: Պրակտիկաները կարող են վերաբերել ամենատարբեր ոլորտներին, սկսած տարածական պրակտիկաներից վերջացրած հագուստով ու ժամանցով: Համաձայն պրակտիկաների տեսության, սրանք նույնպես առանցքային նշանակություն ունեն իշխանության արտադրության գործընթացներում: Նրանք, ովքեր ունեն սեփական նպատակներ, որոնք բխում են կյանքում իրենց իսկ կողմից դրված իմաստներից, նրանք իրականացնում են սեփական իմաստներից բխող նպատակները կյանքի կոչելուն ուղղված պրակտիկաներ (de Certeau 1984. 34): Սակայն, նրանք ովքեր իրանք իրականացնում են իրենց ինչ որ մեկի, կամ խմբի կամ ավանադույթի կողմից տրված պատրաստի իմաստներն ու նպատակները, ապա նրանք հայտնվում են այդ իմաստներն ու նպատակները կրողների իշխանության տակ ու իրացնում պրակտիկաներ, որոնք որ իրենցը չեն: Այս դեպքում, մարդիկ դադարում են սուբյեկտ լինելուց և դառնում են սրա կամ նրա նպատակների իրականացման գործիքներ: Այն կանանց պարագայում, ովքեր օտարվում ու

մեկուսացվում են խոսքի փոխանակության, կարծիք հայտնելու և ճշմարտությունների ձևավորման կամ դրանց վերահաստատման գործընթացներից, վեր են ածվում ուրիշների կողմից իրենց համար սահմանված պրակտիկաների իրականացնողներ: Այդ պատճառով էլ թե ինչ պետք է անեն նման կանայք, որոշում են ոչ թե իրենք, այլ՝ իրենց ամուսինները կամ ամուսինների ծնողները, ովքեր որ տվյալ փոխհարաբերության պարագայում, հանդես են գալիս իրենց տղայի իշխանության իրացման դիրքից: Այսինքն, տղամարդկային գերիշխանության հաստատման ու վերահաստատման դիրքում են: Պատահական չէ, որ ավանադական և պատրիարխալ արժեքներով ապրող միջավայրերում կանայք բացարձակապես կախված են տղամարդու կամքից: Նրանց բոլոր գործողությունները, սկսած տարածության կազմակերպման, վերացրած հագուստի պրակտիկաներից վերահսկվում է տղամարդու կողմից:

Պատահական չէ, որ հասարակությունում բավական տարածված կարծիք կա, որ կնոջ խոսքը չի կարող հիմնավորում լինել տղամարդու համար: Այն տղամարդիկ, ովքեր որ խախտում են տղամարդու գերիշխանությանը ծառայող այս նորմերը և կարևորություն են տալիս կանանց խոսքին որոշումների կայացման և պրակտիկաների իրացման հարցում, պատրիարխալ շրջանակների կողմից ենթարկվում են քննդատության և համարվում են թուլակամ տղամարդիկ, պիտակավորվելով որպես «կնոջ կրունկի տակ հայտնված», «ղզիկ», «լոխ», «էջ», «ոչ տղամարդ»: Հատկանշական է այն, որ նման պիտակավորումները անպայման չէ, որ տղամարդիկ տան: Հաճախ, կանայք շատ ավելի խիստ են իրենց որակումներում:

Տարածված է նաև այն կարծիքը, որ կանայք հանրային փոխհարաբերություններից գլուխ չեն հանում, քանի որ դրանք համարվում են տղամարդկային սոցիալական տարածություն, որի կանոններից կանայք չեն հասկանում: Այս առումով, տղամարդու համար ընդունելի չի համարվում, երբ կինը կարող է հանրային տարածքներին վերաբերող հարցերում փոխհարաբերվի տղամարդկանց հետ, քանի որ ըստ ընդունված կարծիքի կանայք չեն հասկանում կյանքը, իրականությունը: Նման դեպքերում խնդիրը լուծվում է տղամարդու միջամտությամբ: Հատկանշական է, որ նշվածն այնքան ամրապնդված է մարդկանց մտածելակերպում, որ բնորոշ է հասարակության համարյա բոլոր շերտերին.

Երկու տարի առաջ իմ դիմացի գառաժի տիրոջ հետ վիճեցի: Ընդ որում ես ճիշտ էի, եկել մեքենան սխալ տեղում էր կանգնեցրել, ես չեի կարողանում մեքենաս հանել, գործից ուշացա և վիճեցի հետ: Պապաս գնացել էր, իմ փոխարեն ներողություն էր

խնդրել, ասել էր «աղջիկս չի ջոգել ինչ ա ասել»: Բայց ես գիտեմ, որ էդ մարդն ա մեղավոր, իր մեքենան նենց էր բլոկ արել, որ գործից ուշացա:

Կին, ք. Երևան, 31 տարեկան

Ձ. Գենդերային անհավասարությունը առօրյա աշխատանքներում: Ներկայացված բաժինը չի վերաբերում աշխատանքի վայրում կնոջ իրավունքների ֆորմալ կամ ոչ ֆորմալ խախտումներին կամ կանանց աշխատանքի շահագործմանը բիզնես ոլորտում ու պետական սեկտորում, կամ աշխատավայրում կանանց հանդեպ իրականացվող խտրականություններին, քանի որ այս խնդիրը նախ մեր հետազոտական թեմայից դուրս է, երկրորդն էլ այն որոշ առումով արդեն քիչ թե շատ հետազոտված խնդիր է: Մեզ ավելի շատ հետաքրքրում է առօրյա կյանքում կանանց ու տղամարդկանց աշխատանքի խնդիրը: Այն, ինչը ժողովրդական առումով ընդունված է անվանել տղամարդու գործ և կանացի գործ: Առօրյա կյանքում հստակ տարբերակումներ կան տղամարդու և կանանց աշխատանքների միջև: Այսպես օրինակ տղամարդկանց աշխատանք է համարվում այն ամենը, ինչ-որ կապված է բնակարանի, կահույքի, սանտեխնիկայի, հոսանքի, վերանորոգման խնդիրների հետ: Սովորաբար, նման գործերը չեն համարվում կանանց ոլորտ: Ասենք օրինակ, եթե կին փորձի խոհանոցի կամ բաղնիքի փչացած ծորակը նորոգել, կամ բաղնիքի պատերը սալիկապատել, կամ տան պատերը ներկալ կամ պաստառապատել, կամ հատակը ներկել ու էլի նման այլ աշխատանքներ, ապա ամպայման դա շրջապատի մարդկանց կողմից կհամարվի արտառոց մի բան և կդառնա հարևանների քննարկման թեմա: Նույն կերպ նաև կան կանացի գործեր, որոնցում տղամարդու ներգրավվածությունը համարվում է անթույլատրելի: Ասենք օրինակ, ափսեներ լվանալը, լվացք անելն ու լվացք փռելը, հատակները լվանալը, անկողինները հավաքելը, ճաշ պատրաստելը, սեղան գցելն ու հավաքելը ու էլի մի շար գործեր, որոնք որ համարվում են կանացի:

Ես չգիտեմ դա ոնց ա եկել, բայց տղամարդը միշտ պետք ա կարևոր գործերը անի, իսկ կինը մենակ իրա տան գործերով զբաղվի, տղամարդը ասի սենց արա, նենց արա.

ք.Երևան, կին, 40 տարեկան

Կանանց աշխատանքները հիմնականում տան ներսի գործեր են, որոնք նույնիսկ հաճախ չեն էլ ձևակերպվում որպես աշխատանք: Տղամարդու գործի հանդեպ կանանց գործերն ունեն հստակ արտահայտված երկրորդական նշանակություն: Օրինակ, երբ տղամարդիկ բակում ինչ-որ շինարարական աշխատանքեր են իրականացնում, ապա սա է համարվում կարևորը և դրանից հետո

առաջացած կեղտը ավելին ու մաքրելը հարիր չի համարվում տղամարդուն: Սովորաբար, նման դեպքերում տղամարդիկ հիմնական գործն անելուց հետո իրենք հեռանում են և կանչում կանացից որևէ մեկին, որպեսզի սա գա և ավլի ու մաքրի աշխատանքի հետևանքում առաջացած կեղտը: Սա այն աստիճան արմատավորված մի բան է, որ նույնիսկ որոշ հայաստանցի վարպետներ իրենք իրենց գործը անելուց հետո հրաժարվում են մաքրել իրենց հետևից տան տիրոջը ասելով, որ թող հավարարար կանչի գան մաքրեն, դա տղամարդու գործ չէ: Բանասացներից մեկը նման արտառոց պատմություն պատմեց, որը պատահել էր տարիներ առաջ իր բնակարանը վերանորոգելու ժամանակ, երբ նա պատերը վերանորոգող վարպետին խնդրել էր իրենից հետո հավաքել թափված շինարարական աղբը և արժանացել վարպետի հանդիմանանքին, թե հո ինքը հավաքարար չէ, որ նման աշխատանք անի: Հատկանշական է, որ հավաքարարի աշխատանքը հայաստանյան հասարակությունում սովորաբար ընդունված է համարել կանացի աշխատանք և եթե արևմտյան քաղաքներում կարելի է հանդիպել փողոցները ավլող տղամարդ հավաքարարների, ապա Հայաստանում նման տղամարդու դժվար է հանդիպել:

Առօրյա կյանքում տղամարդու համար կնոջ գործ անելու հանդեպ արգելքները տարածված են ողջ Հայաստանում և բնակչության հիմնական մասի մոտ, անկախ կրթական ու մասնագիտական առանձնահատկություններից: Հատկապես, խիստ են սահմանափակումները մարզային բնակավայրերում: Միայն որոշ երիտասարդական տարիքի միջավայրերում է, որ այդ խիստ սահմանափակումները աստիճանաբար հաղթահարվում են և կարելի է հանդիպել տղամարդու, ով կարող է օգնել կնոջը ափսեներ լվանալու, ճաշ եփելու կամ այլ նմանատիպ կանացի համարվող գործերում: Հետաքրքիրն այն է, որ չնայած կանայք նույնպես հիմնականում հեռու են տղամարդկանց գործերին խառնվելուց, սակայն լինում են դեպքեր, երբ կանայք նույնպես մասնակից են դարձել տղամարդկանց աշխատանքներին: Ասենք օրինակ օգնել են ֆիզիկական այս կամ այն աշխատանքն անել բնակարանի վերանորոգման ժամանակ կամ ասենք գյուղերում համարյա հավասար մասնակցել են դաշտամշակման աշխատանքներին, սակայն հետաքրքիր կերպով կանանց այդ աշխատանքը չի համարվում կարևոր: Երբեմն, այնպիսի տպավորություն է, որ կանանց արածը նույնիսկ չի համարվում աշխատանք

Գյուղում զբաղվում են հողագործությամբ ու կինն ու տղամարդը հավասար աշխատում են. Էնտեղ անասուններ են պահում, բոլորն էլ իրենց ներդրումը ունեն, նույնիսկ երեխաները, բայց չզիտես ինչի կանայք վախենում են, որ իրենք մենակ չեն կարող անել:

Կին, ք. Երևան, 28 տարեկան

Ըստ ինձ, աշխատանքի հետ կապված հիմնական պրոբլեմն այն է, որ առօրյայում աշխատանքի պրակտիկաների տարբերությունը ձևավորում է անհավասարություն (նման հիմնախնդրի մասին տես նաև՝ Bourdieu 2001. 8): Այստեղ հարցն այն չէ, որ տղամարդուն ու կնոջը վերապահված պրակտիկաները տարբեր են և ամպայման պետք է դրանք նույնականացվեն: Այլ՝ որ աշխատանքային պրակտիկաների տարբերությունը ձևավորում է անհավասարություն մեկնաբանությունների մակարդակում: Այսինքն, կանացի աշխատանքները մեկնաբանվում են, մի կողմից, ավելի քիչ կարևոր քան տղամարդկայինը, երկրորդ, ավելի քիչ պատվաբեր՝ քան տղամարդկայինը: Կարևորը այդ մեկնաբանությունների մակարդակում անհավասարությունը հաղթահարելն է, ինչը լուրջ խոչընդոտ է առաջացնում տղամարդկաց կողմից կանացի համարվող աշխատանքներ կատարելուն և հակառակը: Այստեղ նույնպես, չնայած ստերեոտիպերի վերարտադրության մեջ առավել նկատելի է տղամարդկանց դերակատարությունը, սակայն կանայք նույնպես ունեն բավական լուրջ դերակատարում: Օրինակ, կանայք կարող են բամբասանքի առարկա դարձնել հարևան տղամարդու կողմից ափսեներ լվանալու փաստը, կամ փնտվեն իրենց ամուսնուն տան ծորակը վերանորոգել չկարողանալու մեջ, թե դու ինչ տղամարդ ես որ, մի հատ փչացած ծորակ անգամ չի կարողանում նորոգել: Այսինքն, ուզում եմ ասել, որ ընդունված պրակտիկաները փոխելու թաքնված արգելակները դրանց մեկնաբանությունները փոխելու դաշտում է: Սակայն, ասածս չի նշանակում, որ պրակտիկաների փոփոխությունը երկրորդական նշանակություն ունի: Երբեմն պրակտիկաների փոփոխությունը դառնում է հենց այն հիմնական մեխանիզմը, որը ազդում է մեկնաբանությունների փոփոխության վրա: Այնպես որ այստեղ խոսքը ոչ թե պրակտիկաների համեմատ դիսկուրսների առաջնայնության մասին է, այլ դրանց փոխկապվածության և համարժեք կարևորման: Շատ կարևոր է, որ պրակտիկաների փոփոխությունը զուգակցվի դիսկուրսների փոփոխությամբ: Հակառակ դեպքում նոր պրակտիկաները հին դիսկուրսների միջոցով մեկնաբանվելու դեպքում, կարող են մղվել մարգինալ գոտիներ ու այդպես էլ հասարակական մասշտաբով լայն ազդեցություն չունանալ:

3. Տղամարդ և կինը որպես առօրեականության հանգուցային նշաններ և դրանք ձևավորող էկվիվալենտները

Հետազոտության առանցքային խնդիրներից է եղել գենդերային ոլորտում հանգուցային նշանների և դրանց էկվիվալենտների ուսումնասիրությունը (Jorgensen, Phillips 2002. 42-43): Հանգուցային անվանում ենք այն նշանները, որոնց միջոցով ձևավորվում են փոխհարաբերության կողմերը և հնարավոր է դառնում կոմունիկացիայի իրականացումը: Իսկ էկվիվալենտները այն առանձին վերացրած իմաստներն են, որոնք բովանդակություն են հաղորդում հանգուցային նշանին: Մեր հետազոտած կոնտեքստում որպես հանգուցային նշաններ հանդես են գալիս տղամարդն ու կինը: Իսկ թե ինչ էկվիվալենտների միջոցով են դրանք կառուցվում, կպարզենք ստորև: Այդ նպատակով հետազոտության ընթացքում առանձնացրել էինք մի քանի հարցեր, որոնց միջոցով փորձել ենք պարզել, թե ինչ են հասկանում մարդիկ կին և տղամարդ ասելով, ինչ հատկանիշների միջոցով է ամբողջանում կնոջ նշանը և ինչ՝ տղամարդու:

Շատ հետաքրքիր էր հատկապես այն, որ հարցազրույցներից մի քանիսում այն հարցին, թե ինչպիսին պետք է լինի տղամարդը, մարդիկ պատասխանել են, որ «իսկական տղամարդը պետք է լինի...» ու հետո թվարկել իր կարծիքով տղամարդու համար բնութագրական հատկանիշները: Իսկ այն հարցին, թե ինչպիսին պետք է լինի կինը, հնչել են պատասխաններ այսպիսի նախաբանով. «լավ կինը պետք է լինի...» և շարունակել թվարկելով բնութագրական հատկանիշները: Սա շատ հետաքրքիր է, քանի որ պարզվում է, որ որոշ պատկերացումների համաձայն տղամարդը լինում է «իսկական», իսկ կինը՝ «լավ»: Այս նույն պատկերացումների կոնտեքստում որպես «իսկական տղամարդու» հանգուցային նշանի էկվիվալենտներ նշվում են «ընտանիք պահող լինելը», «երեխեքին տիրություն անելը», «ում խոսքը ընտանիքում գլխավորն է», «ում խոսքը օրենք է», «իր խոսքը մինչև վերջ տանող», «ում տանը կարգուկանոն է», «ում տանը բոլորը լսում են», «ում կինը չի համարձակվում գլխից թոնել» (նկատի է առնվում կնոջը ինքնագլուխ քայլեր թույլ չտալը), «խիստ լինելը», զուսպ լինելը և նմանատիպ այլ հատկանիշներ, որոնք նշում են ուժեղ ու կամային լինելը, ընտանիքը վերահսկողության տակ պահելը: Միննույն ժամանակ այն հարցին, թե ինչպիսին չպետք է լինի տղամարդը, շատերը նշում են, որ տղամարդը չպետք է լինի նուրբ, հեշտ զիջող, կնոջ կարծիքին առաջնային տեղ տվող, իր խոսքից հեշտ հրաժարվող, զգացմունքային (նկատի է առնվում զգացմունքայնության այն առումները, որոնք ընդունված կարծիքի համաձայն կանացի են), անպատասխանատու, կնոջը ենթարկվող, վախկոտ և այլն: Այն տղամարդիկ, ովքեր չեն պահպանում նշված

սահմանափակումները, կարող են անվանարկվել «կնոջ կրունկի տակ գտնվող», «ղզիկ», «էշ» և այլ նմանատիպ պիտակավորումներով: Դա նաև որոշակիորոն ազդում է նրանց հանրային կշռի ու կարգավիճակի վրա:

Էս վերջերս օպերայի վերևում մի քիչ ուշուտ անցնում էի քայլելով, աղջիկ ու տղա էին կռվում, ասի միջամտեմ, բաժանեմ: Էդ աղջիկը էդ տղային ասում ա ղզիկ, դու կնիկ ես, ասի ֆայտ չեմ խառնվի: Ասենք, էդ աղջիկը ուզում ա էդ տղային վիրավորի ու ասումա դու կնիկ ես: Ես վստահ եմ, որ ինքը չի հասկանում թե ինչ ա ասում, թե չէ ինքն իրեն ա շատ ուժեղ ձևով վիրավորում նախ և առաջ: Ինքը ենթագիտակցորեն իրեն երկրորդ սորտի ա համարում:

ք. Երևան, կին, 31 տարեկան

Եթե տղամարդկանց մի 10 տոկոսը իրենց կանանց խոսքը հարգում են կամ իրենց կանանց հետ հաշվի են նստում, ասում են էշ են: Օրինակ իմ քրոջ ընտանիքում հարգանք կա, քրոջս ամուսինը հարցնում էր քրոջս, թե ոնց անեն կամ թե արի էսպես չանենք, արի սենց անենք: Իսկ իմ ընտանիքում տենց բան չկար, ու ամեն անգամ ինձ ասում էին, որ իմ քրոջ ամուսինը տղամարդ չի: Նույնիսկ ամուսինս չէր էլ թողում ես շփվեի քրոջս հետ, որովհետև քույրիկս ուներ խոսքի իրավունք իրենց տան մեջ ու հնարավոր ա ինչ-որ բան խոսեինք իրար հետ, դա արդեն մեր տան մեջ պատերազմ էր, որովհետև քույրս ինչ-որ բան ա ասում, դու էլ էդ մտածելակերպը ընդունում ես:

թ. Երևան, կին, 27 տարեկան

Հետաքրքիր է նաև տղամարդու հանգուցային նշանը բնութագրող և հատկապես թաղային միջավայրերում երիտասարդ ու պատանի տղաների միջավայրում տարածված այն եկվիվալենտը, որ տղամարդը չպետք է լինի բարեկիրթ՝ «կուլտուրական»: Հատկապես, ծաղրվում է «կուլտուրական» լեզվով խոսելը: Հաճախ, նման տղաներին դիտողություն են անում կամ ծաղրում, որպեսզի նա «տղայավարի» խոսի: Հետաքրքիր է նկատել, որ այսպես կոչված *կուլտուրական* լեզուն ի տարբերություն *տղայականի*, լեզվի կիրառման մակարդակում տղամարդուն չի հեռացնում ու բևեռացնում կնոջից, այլ՝ հակառակը որպես կնոջ ու տղամարդու համար ունիվերսալ լեզու մտեցնում է (անհավասարության ձևավորման մեջ լեզվի դերի մասին տես՝ Blommaert 2005. 67-78): Ինչ վերաբերում է «լավ կին» հանգուցային նշանի եկվիվալենտներին, ապա դրանցում առաջնային տեղ են գրավում այն, որ կինը պետք է լինի ամուսնու խոսքը լսող, այն միշտ բարձր պահող, ամուսնու պատիվը բարձր պահող, համեստ, հնազանդ, խելոք, լսող, տունը մաքուր պահող, երեխաների

ու ամուսնու հանդեպ հոգ տանող, խնամող, ամուսնու ծնողների հանդեպ հարգալից: Ինչպիսին չպետք է լինի կինը հարցի հիմնական պատասխաններն են, որ առաջին հերթին կինը չպետք է լեզվանի լինի, չպետք է վիճի ամուսնու հետ, չպետք է հարևանների տներով թափառի, չպետք է ինքնագլուխ լինի, չպետք է փնթի ու թափթփված լինի :

Տղամարդու և կնոջ հանգուցային նշանները ձևավորող թվարկված էկվիվալենտներն ըստ էության այն ֆոնային ակնկալիքներն են, որոնք որ տղամարդու ու կնոջ հանդեպ ներկայացնում է հասարակական միջավայրը և որոնք, որպես հանգուցային նշան կրողներ ու ռեպրեզենտացնողներ նրանք պարտավոր են զգում ներկայացնել հանրայնորեն նշանակալի միջավայրերում՝ ընտանիքում, ազգակիցների միջավայրում, թաղային կամ գյուղական համայնքում, շենքի բակում, խնջույքների և այլ նշանակալի միջուցառումների ժամանակ:

Հանգուցային նշանները ամբողջացնող էկվիվալենտներն ունեն երկակի դերակատարություն: Դրանք, մի կողմից, ստեղծում են այն բովանդակությունը, որը կնոջ կամ տղամարդու նշանը հանրային միջավայրերում պետք է ռեպրեզենտացնեն, որպեսզի վերատադրվեն, մյուս կողմից էլ, էկվիվալենտները ուրվագծում են այն ակնկալիքները, որոնք որ հասարակությունը պետք է ունանա տղամարդուց ու կնոջից: Շնորհիվ նշվածի տղամարդը կամ կինը որպես հանգուցային նշան ռեպրեզենտացվելով, իրացնում են այնպիսի պրակտիկաներ, որոնք, մի կողմից, ներկայացնում են էկվիվալենտների կողմից նշանին հաղորդվող բովանդակությունը, մյուս կողմից՝ բավարարում հանրային միջավայրի կողմից ներկայացվող ակնկալիքները տղամարդուց ու կնոջից:

Այսպես օրինակ, տղամարդու նշանի համար էկվիվալենտները ստեղծում են խոսքը մինչև վերջ տանողի, չզիջողի և այլ նմանատիպ բովանդակություններ, իսկ կնոջ համար հնազանդվող, լսող, լեզվին չտվող: Համապատասխանաբար, հանրային միջավայրերում ֆոնային ակնկալիքն այն է, որ տղամարդն ու կինը պետք է ներկայացնեն իրենց նշանի տակ դրված բովանդակությունները: Եթե տեղի է ունենում շեղումներ կնոջ կողմից, ապա նրա հանդեպ կիրառվում է բռնություն: Եթե շեղվողը տղամարդն է, նրա հանդեպ կիրառվում է հոգեբանական բռնություն ու ճնշում, ենթարկելով նրան պատվազրկող տարբեր անվանակումների և իջեցնելով նրա ստատուսը հանրային միջավայրերում: Որպեսզի տղամարդը չկորցնի իր ստատուսը և իշխանություն ունենա հանրային միջավայրում, նրան անհրաժեշտ է պահպանել իր հանդեպ առկա ֆոնային ակնկալիքները և իրացնել այդ ակնկալիքները սնուցող բովանդակություններ ներկայացնող պրակտիկաներ: Այդ պրակտիկաները տարածվում են վերը նկարագրած առօրեականության բոլոր ոլորտների վրա, սկսած

տարածության, ժամանակի կազմակերպման, վերջացրած հագուստի, խոսքի փոխանակման ու տնային գործերի պրակտիկաներով: Այս նշանները ռեպրեզենտացվում են ինչպես ընտանիքում, այնպես էլ հանրային միջավայրերում: Այսպես օրինակ, տղամարդը կարող է սաստել կնոջն իրեն ընդհատելու համար հանրային ցանկացած միջավայրում, կամ ապտակել նրան տղամարդկանց խոսակցությանը խառնվելու համար: Հանգուցային նշան ձևավորող էկվիվալենտները ձևավորում են նաև ֆոնային ակնկալիքներ տղամարդու հանդեպ և ֆոնային ակնկալիքներ կանանց հանդեպ: Այդ ակնկալիքները թե կանանցից, թե տղամարդկանցից ունեն և տղամարդիկ և կանայք և բոլոր հասարակական ինստիտուտները: Երբ, ասենք օրինակ, տղամարդը չի բավարարում այդ ակնկալիքը նույնիսկ իր կինը կարող է պիտակավորել նրան, որպես «թույլ», «ղզիկ», «փալաս»: Ասենք օրինակ, երբ ասվում է, որ տղամարդը տան գլուխն է, սա տղամարդու հանգուցային նշանի էկվիվալենտներից մեկն է: Այս էկվիվալենտը ձևավորում է տղամարդու հանդեպ ֆոնային ակնակալիք, որ նա պետք է հոգա ընտանիքի մասին, կառավարի ընտանիքը և ամենակարևորը կայացնի ընտանիքին վերաբերող որոշումներ: Եթե տղամարդն այդպիսին չի, ապա նրան կարող են անվանարկել:

Հատկանշական է, որ կնոջը ներկայացվող ֆոնային ակնկալիքները հիմնականում մղում են այն բանին, որ կինն ինքն իրեն հեռու պահի իմաստների ձևավորման, ճիշտ ու սխալի որոշման, որոշումների կայացման գործընթացներից: Դա հատկապես բնորոշ է այն սոցիալական միջավայրերին, որոնք մոտ ավանդույթը գերակայում է անհատական կարծիքին:

Ինչպե՞ս են ազդում գենդերային անհավասարության վրա կնոջ ու տղամարդու հանգուցային նշաններն ու դրանք ձևավորող էկվիվալենտները: Նախ, դրանք ձևավորում են տղամարդու իշխող, կոշտ և կնոջ հնազանդվող, թույլ կերպարներ և անհավասարությունն ու բռնությունն ծնող ֆոնային ակնկալիքներ: Երկրորդը, խրախուսում են ընտանիքում համակեցության ենթակայական տիպի գերակայությանը համագործակցային տիպին, որտեղ հարաբերությունների հիմքում ընկած է ուղղահայաց իշխանության, այլ՝ ոչ իրավունքի սկզբունքը:

Այսինքն, կարելի է ասել, նշված հասարակական միջավայրերում տղամարդ – կին փոխհարաբերություններում տղամարդու կարգավիճակի ձևավորումն ու վերարտադրությունը պայմանավորող կարևոր գործոններից մեկը կնոջ հանդեպ իշխանությունն է քան ինքնուրույնը, որը համարվում է տղամարդկություն: Դա արտահայտվում է երկու հիմնական մակարդակներում: *Առաջինը*, ինչպես արդեն վերը նկատեցինք իմաստների ձևավորման ու վերարտադրության գործընթացներում

Ճիշտ ու սխալի մասին հասարակայնորեն շրջանառվող հասկացությունների մակարդակն է, որտեղ կարևոր է համարվում, որ գերակայությունը տրվի տղամարդու դերակատարությանը: Կնոջ լեզվանի չլինելը, ամուսնու խոսքին հնազանդ ու լսող լինելը սրանք հանգուցային նշանը իմաստավորող առանցքային էկվիվալենտների շարքում են: *Երկրորդը*, կնոջ հանդեպ իշխանություն բանեցնելու պրակտիկաների մակարդակն է (Այս երևույթը խիստ բնորոշ է եղել նաև ավանդական շրջանին: Տես՝ Լալայան 2004. 159; Варданян 1981):

4. Կին տղամարդ հանգուցային նշանների ու դրանց էկվիվալենտների տարատեսակները հայաստանյան հասարակությունում

Գրանցված հետազոտական տվյալները թույլ են տալիս ասել, որ տղամարդու և կնոջ վերը նկարագրված հանգուցային նշանները և դրանք ամբողջացնող էկվիվալենտները, որոնք մեր կարծիքով կազմում են գերակա տիպը, միակը չեն: Տղամարդու և կնոջ հանգուցային նշանները ունեն մի շարք տարատեսակներ: Դրա հիմնական պատճառը նշանը էկվիվալենտների միջոցով մեկնաբանելու մոտեցումների տարբերությունից է գալիս: Այսինքն, հասարակության մեջ կան կրթական, մասնագիտական, լուսավորվածության և աշխարհայացքային տարբեր որակներ ունեցող խմբեր, որոնցում տղամարդու ու կնոջ հանգուցային նշանների ձևավորումն ու իմաստավորումը ունի շեղումներ տիրապետող տիպից: Դրա պատճառն այն է, որ Հայաստանի հասարակությունում չնայած բավական զգալի է ավանդույթին կապված պահպանողական մոտեցումներ ունեցողների ազդեցությունը, սակայն այդ ավանդույթները՝ նախ, դոգմատիկ բնույթի չեն և ժամանակ առ ժամանակ ենթարկվում են վերամեկնաբանման այն կրողների կողմից, երկրորդ, հասարակությունում օրեցօր մեծանում է նաև սեփական դիրքից հանգուցային նշանները մեկնաբանողների թիվը: Այս առումով կարելի է ասել, որ կան հասարակական շրջանակներ, որոնցում

- հանգուցային նշանները կազմող էկվիվալենտները գնահատվում են որպես ավանդույթ ու նաև մեկնաբանվում են ավանդույթի միջոցով: Այսինքն, ընդունվում է տղամարդու կամ կնոջ համար ավանդույթի կողմից տրվող ճիշտն ու սխալը ու այն մեկնաբանելու համար անահատական մոտեցում չի ցուցաբերվում՝ հղում արվելով ավանդույթին (պապերից է եկել, ազգային ավանդույթ է, այդպես եկել է այդպես էլ կշարունակվի և այլն):

- հանգուցային նշանները կազմող էկվիվալենտները գնահատվում են որպես ավանդույթ, սակայն մեկնաբանությունների մեջ թույլատրվում են նաև անհատական մոտեցումներ, ինչը հնարավոր է դարձնում անհատի դիրքից ժամանակավրեպ կամ սխալ համարվող էկվիվալենտները փոփոխության ենթարկել,

- Հանգուցային նշանները կազմող էկվիվալենտները չեն դիտարկվում որպես ավանդույթ և դրանք ձևավորվում են բացառապես անհատի ինքնության ու սուբյեկտության դիրքից ու նպատակահարմարությունից:

Կարելի է ասել, որ առկա են կնոջ և տղամարդու հանգուցային նշանների մի քանի հիմնական տարատեսակներ: Հետազոտության տվյալները թույլ են տվել առանձնացնել կնոջ հանգուցային նշանի հետևյալ տարատեսակները. *կին-տիկնիկ, կին մայր և տնային տնտեսուհի, տղամարդ – կին, անկախ կին*:

Կին – տիկնիկը բավական տարածված տարատեսակ է: Այն բնորոշ է հատկապես երիտասարդ տարիքի կանանց: Նման կանանց համար որպես էկվիվալենտներ առանձնացվում է տղամարդու խոսքին հնազանդությունը, նրբությունը, գեղեցկությունը, խնամվածությունը: Այս պատկերացման համաձայն տղամարդը կնոջը պետք է վերաբերվի որպես տիկնիկի: Փող աշխատի, սիրի նրան, խնամի, հազցնի, քնքուշ վերաբերմունք ցույց տա, տանի լավ տեղեր ման տալու, իսկ կինը պետք է նվիրված լինի իր ամուսնուհի, ծառայի նրան, հոգատար ու ուշադիր լինի, իրեն հետևի, որպեսզի ամուսնուն դուր գա, խնամի ու ծառայի նրան: Հատկանշական է, որ այս տիպը, ըստ մեր հետազոտական նյութերի շատ արագ հիասթափվում է տղամարդուց, եթե նա դադարում է բավականաչափ վաստակել և բավարարել իր քմահաճույքները:

Սոցիալական էս վիճակում պապան իրա կյանքն է. «պապուլս,կյանքուլս», որ կայքը բացում ես «վուխ մեռնեմ պապայիս ջանին»: Բայց որ պահին պապուլի գործերը մի քիչ թարս գնաց կամ որոշեց սահմանափակել, հոպ, «պապուլը ով ա, որ»: Սկսում է մամայի նման վերաբերել պապուլին: Օրինակ ունի դեմը, մաման է: Կապ չունի, որ պապան ավտոգապչաստ է սարքում կամ ավտոյի տակը առավոտից-իրիկուն ցեխոտ ձեռքերով, հա, երկաթ է կռում... մաման ու աղջիկը շատ հարդարված, երբեք չես ասի, որ պապան մրոտ ձեռքերով ավտո է նորոգում: Բայց, երբ հանկարծ էդ իրանց կացութաձևը չապահովեց պապուլը, ինքը զրկվում է պապուլ լինելուց:

ք.Երևան, տղամարդ, 28 տարեկան

Պատկերավոր ասած, կանանց այս տեսակը իրեն նույնականացնում է մանուկ հասակում ունեցած իր տիկնիկների հետ: Նրանց մոտ տիրապետողն այն կարծիքն է, որ տղամարդը կնոջը պետք է տիկնիկի նման խնամքով ու նրբորեն վերաբերվի:

Տիկնիկի հետ ոնց են խաղում, երբ որ տիկնիկ ես ունենում տանը, ասում ես էս շորը հանեմ, ուրիշ շոր կարեմ, հագցնեմ, դնեմ, սիրուն երևա, չէ, լավը լինի, ասենք ինչ-որ փոփոխություն լինի, տարվա մեջ էդ տիկնիկի վրա ինչ-որ բան փոխես:

ք. Երևան, կին, 43 տարեկան

Կին – տիկնիկները կարող են հայտնվել նաև հիասթափության մեջ, քանի որ տղամարդկանց մեջ բավական քիչ են այնպիսիները, ովքեր փնտրում են տիկնիկ: Տղամարդկանց հիմնական մասը, դաստիարակվում է այնպես, որ գտնի իր համար կին–մայր, տնային տնտեսուհի: Եվ հատկանշական է, որ տղաները նաև փոքր ժամանակ չեն դաստիարակվում այնպես, որ տիկնիկների հետ խաղան: Սակայն, տեսնում են տիկնիկ խաղացնող աղջիկներին: Այս առումով նրանք փնտրում են ոչ թե կին–տիկնիկներ, այլ «տիկնիկ–երեխա» խնամող կնոջ: Այդտեղ է հաճախ կին–տիկնիկների հիասթափությունը, որ տղամարդիկ շատ շուտ իրենցից հիասթափվում են և սկզբնական ուշադրությունը փոխարինվում է սովորական առօրյայով: Արտահայտված որոշ կարծիքների համաձայն կին–տիկնիկները տղաների մոտ հաջողություն ունեն մինչև անուսնանալը՝ ընկերություն անելու համար: Իսկ ամուսնանալու համար տղաները նախընտրում են *կին–մայր, տնտեսուհու տիպը*:

Կին–մայր, տնտեսուհի հանգուցային նշանը վերն արդեն բազմիցս քննարկված տիրապետող հանգուցային նշանն է, այդ պատճառով դրա վրա այստեղ կանգ չենք առնի նորից: Միայն նկատենք, որ սովետական ինդուստրիալիզմի ու մոդեռնիզմի ժամանակաշրջանը կնոջ այս տեսակի էկվիվալենտների շարքը լրացրեց *աշխատող կնոջ* կերպարով: Այսինքն, հաճախ այս կանայք ոչ միայն մայր ու տնային տնտեսուհի են, այլև՝ դրսում աշխատող ու գումար վաստակող: Սակայն, դա չի խանգարում, որ նրանից սպասվող ֆոնային ակնկալիքները մնան նույնը ինչ–որ կին տնային տնտեսուհու դեպքում է:

Կանանց մեջ առանձնացվում է մի տիպ, որն ընդունված է անվանել *տղամարդ կիկ*: Մրանք այն կանայք են, ովքեր իրենց ուսերին են վերցնում ընտանիքի նյութական կարիքների բավարարման խնդիրների հիմնական մասը, զբաղվում են ընտանիքի համար կարևոր որոշումների կայացմամբ, իսկ դրսում էլ ստիպում են տղամարդկանց վերաբերել իրենց հետ հարգանքով և հավասարի պես: Չնայած այդ ամենին, կանանց այս տիպը շարունակում է տղամարդուն դիտարկել որպես գերակայող և հաճախ

նշվում է, որ իրենք կյանքի պայմանների թելադրանքի տակ ստիպված են մտել «տղամարդու» դերի տակ: Նման կանայք հայաստանյան հասարակության մեջ շատ չեն:

Մյուսը, *անկախ կնոջ տիպն* է: Սրանք հիմնականում երիտասարդ աղջիկներ են, ովքեր ունեն որակյալ կրթություն և վաստակում են ինքնուրույն: Շատերը սովորել են արևմուտքում, ունեն լավ վճարվող աշխատանք և իրենք են տնօրինում իրենց անձնական կյանքին վերաբերող հարցերը, ինքնուրույն որոշումներ կայացնում և կազմակերպում իրենց ժամանցը ըստ իրենց հայեցողության: Նման կանանց զգալի մասը ամուսնացած չեն և հիմնականում զբաղված են իրենց մասնագիտական կարիերայով: Այս տիպի մեջ իհարկե հանդիպում են նաև ամուսնացածներ, ովքեր ընտանիքի ներսում հավասար իրավունքներով են հարաբերվում ամուսինների հետ: Այս կանանց հանդեպ բռնություն գործադրելու դեպքեր չեն հանդիպում, քանի որ սրանք ունեն անհատականության մակարդակում կայացած, իրենց համարժեք ոճականության տղամարդիկ, ովքեր ոչ թե ինքնահաստատվում են ավանդույթի կողմից իրեն վերապահված տղամարդու դոմինանտ դերի մեջ մտնելով և կնոջ հանդեպ իշխանություն իրացնելով, այլ՝ ռացիոնալ երկխոսության միջոցով հարցեր քննարկելու և կոնսենսուսի միջոցով: Այս տիպի կանայք Հայաստանում փոքրամասնություն են կազմում և բնակվում են հիմնականում Երևան քաղաքում:

Ինչ վերաբերում է տղամարդու հանգուցային նշանի տարատեսակներին, ապա ըստ գրանցված հետազոտական տվյալների կարելի է առանձնացնել *տուն պահող կոշտ տղամարդու*, *տուն պահող կիրթ տղամարդու*, *տղամարդ անհատականության* տիպերը: Կան նաև տղամարդու այլ երկրորդական տիպեր, որոնց այս վերլուծության մեջ չենք անդրադառնա: Նշվածներից առաջինը, որպես տղամարդու գերակայող հանգուցային նշան, վերն արդեն քննարկել ենք: Երկրորդ տիպը՝ *տուն պահող կիրթ տղամարդու* հանգուցային նշանը սովետական մոդեռնիզացիայի և ինուստրիալիզացիայի ժամանակներում ձևավորված և հետխորհրդային շրջանում նորովի վերախմաստավորված տիպն է: Սրա համար որպես էկվիվալենտներ նշվում են տուն պահող, իր խոսքն ունեցող, կնոջը հարգող, սիրող, կնոջ հանդեպ հոգատար, կնոջ կարծիքի հետ հաշվի նստող, սակայն, ընտանիքում գլխավորի դիրքը պահող: Հանգուցային այս նշանը չնայած գերակայող չէ, սակայն բավական տարածվածներից է: Ինչ վերաբերում է երրորդ տիպին, ապա սա ավելի շատ հետխորհրդային Հայաստանում ձևավորված տիպ է: Այս հանգուցային նշանին բնորոշ է կայացվածությունը, ինքնուրույնությունը, կնոջը որպես ինքնուրույն անհատ դիտարկելը, կնոջ սեռականության հանդեպ հարգալից վերաբերմունքը և կնոջ հետ

հավասարի դիրքերից հարաբերվելը: Տղամարդու այս տեսակը կնոջ հետ կոմունիկացիայում սովորաբար դիրքավորվում է շատ բազմազան դիրքերում և կնոջը նույնպես ընկալում և ընդունում է բազմազան դիրքերում, սկսած սեռական գույքընկերոջից կամ ամուսնուց, վերջացրած զրուցակից ընկեր, գործընկեր, գիտնական, արվեստագետ, քաղաքացի և այլն: Այդ պատճառով հանգուցային նշանի այս տարատեսակով բնութագրվող տղամարդիկ էկվիվալենտների առանձնահատկության շնորհիվ կանանց հետ ավելի շատ կոմունիկացվում են անհատական ու ստեղծագործական կոմունիկացիոն հարթակներում, որտեղ գերակա համակեցության ու հարաբերման ձևը ոչ թե ենթակայությունն է, այլ՝ համագործակցությունը:

Հանգուցային նշանների տարատեսակների ու դրանք ձևավորող էկվիվալտների բազմազանությունը, կարևոր է ոչ միայն այն բանով, որ դրա շնորհիվ կին տղամարդ հարաբերությունները խիստ միօրինակ չեն ու դուրս են գալիս գերակա տիպի սահմաններից, այլ՝ որ ավելի կարևոր է, պարունակում են փոփոխությունների լուրջ ռեսուրս: Դրանում շատ կարևոր է այն, որ նշված տարատեսակները լեգիտիմացնում են բազմաթիվ այլ պրակտիկաներ, տարածական, ժամանակի, միջսեռային փոխհարաբերության, խոսքի փոխանակման և այլն, որոնք տարբերվում են գերակայող տիպի պրակտիկաներից: Պրակտիկաների բազմազանությունը թույլ է տալիս քննադատորեն նայել գերակայող տիպի պրակտիկաներին, ինչն էլ նպաստավոր ֆոն է ստեղծում կանանց իրավահավասարությանն ուղղված ծրագրերի ու միջոցառումների իրականացման հարցում:

5. Գենդերային անհավասարությունը և կոմունիկացիոն հարթակների հիմնախնդիրը:

Կոմունիկացիան հասարակական կյանքում ունի մի շատ կարևոր հատկանիշ, դրա միջոցով արտադրվում և վերարտադրվում են հասարակության համար նշանակալի իմաստները, որոնք որ տարանջատում են ճիշտը սխալից: Այս գործընթացը տեղի է ունենում հիմնականում բովանդակությունները հանրային տարածքներում քննարկելու միջոցով: Որպեսզի այդ քննարկումը տեղի ունենա անհրաժեշտ է, որ լինեն մարդիկ, ովքեր որ համարվում են ճշտի ու սխալի արտադրողները/վերարտադրողները և տարածողները: Ճշտի ու սխալի մասին իմաստները ժամանակ առ ժամանակ պարբերաբար ներկայացվում են հանրային տարածքներում և տեղի է ունենում իմաստների փոխանակում այն մարդկանց միջև,

ովքեր որ խոսքի փոխանակության գործընթացում համարվում են դերակատարներ: Պատրիարխալ հասարակությունում դրանք հիմնականում տղամարդիկ են: Այդ պատճառով էլ տղամարդիկ են կոմունիկացիայի հիմնական մասնակիցները: Կանայք կոմունիկացիայի մասնակից, այսինքն իմաստների ձևավորման, վերարտադրման ու վերահսկման գործում դերակատարներ չեն համարվում: Նրանց վերապահված է այդ իմաստներին ենթարկվելը: Այդ պատճառով էլ կանայք չունեն իրենց տեղը հանրային նշանակություն ունեցող տարածքներում: Սա այն խնդիրներից մեկն է, որն առկա է հայաստանյան հասարակության մի զգալի մասի մոտ: Խոսքը վերաբերում է հատկապես մարզերի ու Երևանի արվարձանների ու ծայրամասային թաղամասերի բնակչության հիմնական մասին:

Մյուս հիմնախնդիրը, որն առկա է կոմունիկացիոն դաշտում դա կանանց ու տղամարդկանց միջև կամունիկացիոն հարթակների ծայրահեղ բևեռային վիճակն է: Հիմնական կոմունիկացիոն հարթակը, որտեղ կինը կարող է ռեպրեզենտացվել, դա հենց սեռը ցուցող հանգուցային նշանի հարթակն է: Կնոջ հանգուցային նշանի այն բովանդակությունը, ինչը կառուցվում է մարզային միջավայրերում ավանդույթի կողմից տրվող էկվիվալենտների միջոցով, թույլատրվում է ներկայացնել բացառապես ընտանիքում:

Այսինքն, կինը բացի այն բանից, որ կարող է ներկայացնել իր սեռը՝ տղամարդուն իշխանությանը ենթակայության նշանով, այլ իմաստավորմամբ, որպես կոմունիկացիայի կողմ, ավանդական միջավայրում հաճախ պարզապես չի ընկալվում:

Ասենք մարդ էս, տղամարդկանց մարդկայինով մի բան էս հարցնում, էս տղամարդը մտածում ա սեռական ուղղությամբ, ինձ շատ ա հանդիպել: Տղամարդուն մի հարց էս տալիս, սկզբում լավ պատասխանում ա, մտածում էս ինչ լավ, մարդկային են, բայց մեկ էլ տեսնում էս ուրիշ աչքերով ա նայում: Ես դրանից շատ հիասթափվեցի, դրա համար նույնիսկ պահ ա լինում չեմ ուզում տղամարդկանց բարենեմ, կամ իրանց հետ շփվեմ, ջղայնանում եմ:

ք.Երևան, կին, 40 տարեկան

Հատկապես մարզերում, հանրային միջավայրերում համարյա թե չկան այնպիսի կոմունիկացիոն հարթակներ, որտեղ կինը կարող էր ընկալվել ու ընդունվել որպես սեփական ստատուս ունեցող և սեփական ստատուսը ռեալիզացնելու ունակ մեկը: Փաստացիորեն, շատ բնակավայրերում կինը հանրային միջավայրերում տեղ չունի: Նրա համար կոմունիկացիայի տարածք չի նախատեսված: Միակ տարածքը դա

տան ներսն է: Եվ եթե կինը հայտնվում է որևէ կոմունիկացիոն տարածքում, որը ընտանիքից դուրս է, նրան ընկալում են ոչ թե որպես մարդ, այլ տղամարդու հովանավորությունից դուրս հայտնված, սեփական իշխանություն չունեցող մեկը, ում հանդեպ կարելի է նույնիսկ սեռական ոտնձգության փորձ անել: Հատկանշական է, քանի որ կինը չի դիտարկվում որպես կոմունիկացիայի սուբյեկտ, նա չի դիտվում նաև այնպիսի մեկը, ով կարող է դիրք ունենալ հանրային տարածքներում: Մարդ կարող է դառնալ կոմունիկացիայի սուբյեկտ, եթե նրան այդ հասարակությունում իմաստների արտադրության ու վերատադրության մեջ դերակատարություն է վերապահված: Մեր հետազոտական նյութերը ցույց են տալիս, որ հայկական հասարակության այն միջավայրերում, որտեղ որ առօրյա պրակտիկաներում կնոջ հանդեպ անհավասարությունը արտահայտված բնույթ ունի և հաճախ դա դրսևովում է նաև բռնությունների ձևով, կինը առաջին հերթին զրկված է խոսք ասելու իրավունքից: Նա չի դիտվում մեկը, ով կարող է սեփական կարծիք ունենալ, կամ ում կարծիքը կարող է նշանակալի լինել: Նա ամպայման պետք է տղամարդու կարծիքը կրի, քանի որ եթե ունացավ սեփական կարծիքը, ապա կարող է նաև հայտ ներկայացնել այդ կարծիքը արտահայտելու համար տեղ ունանալու և նաև հավակնություն ունենալ հանրային տարածքում դիրքավորավելու համար: Սա արդեն լուրջ հայտ կարող է լինել իշխանություն ձեռք բերելու և իշխանության ձևավորման գործընթացներում քաղաքականության մասնակից դառնալու տեսանկյունից: Պատահական չէ, որ Հայաստանում կանայք քաղաքականությունից համարյա թե լիովին դուրս են մնացել:

Կին տղամարդ հարաբերություններում կոմունիկացիոն նման իրավիճակը այն հիմնական պատճառներից է, որը առաջացնում է կնոջ անհավասար վիճակը, նրա հանդեպ կիրառվող բռնությունները և այդ ամենը բնական ընկալելու հասարակության ավանդապահ շրջանակներում տարածված կարծիքը:

Կարելի ասել, որ ավանդապահ միջավայրերում կոմունիկացիան տեղի է ունենում գլխավորապես տղամարդկանց միջև: Կանայք մի տեսակ ապրում են այդ ամենից դուրս: Դրա համար էլ նրանք դուրս են մղված հանրային միջավայրերում տեղակայված կոմունիկացիոն տարածքներից:

Կանանց և տղամարդկանց միջև կոմունիկացիոն ներկայացված իրավիճակը ձևավորվում է աստիճանաբար: Դրանում հատկապես առանցքային դեր է խաղում հասունացման շրջանում սեռերի սոցիալիզացման գործընթացը: Ըստ գրանցված հետազոտական տվյալների, հատկապես հասունացման տարիքում, աստիճանաբար խորացվում է տղաների ու աղջիկների աշխարհների միջև ճեղքվածքը, մղելով

դրանցից յուրաքանչյուրը իրար հակադիր բևեռներ: Հատկանշական է, որ աղջիկների ու տղաների աշխարհների բևեռացումը իրականացվում է էկվիվալենտների հակադրման ճանապարհով: Դրանք ըստ էության մեկը մյուսին մերժող, արգելափակող էկվիվալենտներ են: Ասենք օրինակ, լացը ոչ թե համարվում է մարդկային էկվիվալենտ որը կարող է միաժամանակ բնորոշ լինել տղաներին ու աղջիկներին, այլ՝ այն բնորոշ է աղջիկներին: Տղաներին աղջկան բնորոշ վարք ցուցադրելը համարվում է ամոթ և ծաղրվում է: Այսինքն, ցանկացած հեռացում տղաների հանգուցային նշանը ցուցող բևեռից կարող է ուղղված լինել նրա սեռային ինքնության դեմ և նվազեցնել նրա տղա համարվելու աստիճանը: Նույնը աղջիկների համար: Այսինքն տղաների ու աղջիկների տարբերությունը կառուցվում է դրանց հակադրման ճանապարհով, ինչը վերջին հաշվով ազդում է երկու սեռերի միջև փոխհարաբերության բնույթի վրա, կառուցելով դրանք ենթակայության, այլ՝ ոչ թե սիրո վրա: Պատահաբար չէ, որ ավանդական միջավայրերում սերը, դրա ցուցադրումը համարվում է ոչ միայն ամոթ, այլև՝ պախարակելի մի բան: Միմիանց նկատմամբ սիրո ու ջերմության ցուցադրումը ավանդական կեցվածքի թե տղաները և թե աղջիկները համարում են ամոթ: Էլ ավելի ամոթ է, եթե դա ցուցադրվում է հանրայնորեն: Այսինքն, սիրո ցուցադրմամբ տղամարդու և կնոջ փոխհարաբերությունների հանրայնացումը արդեն կոմունիկացիա է, ինչը ավանդական կենսակերպը մերժում է, քանի որ ընդհանրապես մերժում է կնոջ որպես կոմունիկացիայի կողմ լինելու հնարավորությունը: Այսպիսով սեռահասունացման տարիքում սեռերի սոցիալիզացիան ընթանում է էկվիվալենտների հակադրման ճանապարհով: Այն ինչ բնորոշ է աղջիկներին չպետք է բնորոշ լինի տղաներին և հակառակը: Այս առումով հետաքրքիր է, որ հետխորհրդային տարիներին նկատվում է մի գործընթաց, որը հաճախ զարմանք է առաջացնում: Թե դպրոցներում և թե նույնիսկ բուհերում հիմնականում լավ սովորողները աղջիկներն են: Խնդիրն այն է, որ տղաների միջավայրում լավ սովորելը ի հակադրություն աղջիկների չի համարվում տղամարդկային: Հակառակը, տղան պետք է չսովորի, դասից փախնի, չարություն անի: Այսինքն, այդ հակադրությունը տարածվում է նույնիսկ կրթական հաստատությունների վրա և ազդում առաջադիմության վրա:

Աղջիկները դաստիարակվում են ենթարկվող, լսող, փափուկ, նուրբ, հեզ, իսկ տղաները մեծախոս, փողոցում իրենց դրսևորող, «իր խոսքը դնող», մյուսներին ծեծող ու խեղճացնող և այլն: Տղաների ու աղջիկների աշխարհների բևեռացումը, հակադրումն ու միմիանցից աստիճանաբար հեռացումը հաճախ բարդացնում է փոխընթացման հնարավորությունը նույնիսկ ամենից պարզ իրավիճակներում: Ավելին,

քանի որ հաճախ աղջիկները չեն դիտվում որպես կոմունիկացիայի կողմ, կոմունիկացիայի մեջ մտնելու, այսինքն իմաստների, մտքերի ու ճշմարտությունների փոխանակությանը մասնակցելու նրանց քայլերը դիտվում են որպես ոսոնձգություն տղամարդու դիրքի հանդեպ ու պատժվում: Կարող ենք ասել, որ սոցիալիզացիայի հետևանքում առաջանում է տղաների ու աղջիկների միջև կոմունիկացիոն դիֆիցիտ: Ըստ էության, կոմունիկացիոն այնպիսի հարթակներ, որոնք թույլ կտան աղջիկներին ու տղաներին ներկայացնել ոչ միայն իրենց սեռը ցուցող հանգուցային նշանը և այն կազմող էկվիվալենտները, այլև անհատականությունը և անհատականությունից բխող իմաստները, շատ սուղ են, եթե չասենք որ մարզային բնակավայրերում համարյա թե բացակայում են: Մարզերում, աղջիկները տանից և դպրոցից դուրս չունեն ընդհանրապես մի որևէ տեղ դուրս գալու և հաղորդակցվելու: Նրանց չի կարելի գնալ սրճարաններ, կինոթատրոններ, դուրս գալ զբոսայգում կամ փողոցում ման գալու:

Աղջիկների ու տղաների հաղորդակցումը սահմանափակված է և չկան միջանկյալ կոմունիկացիոն հարթակներ, որտեղ սեռերի միջև հաղորդակցումը կարող է իրացվել, սեռային առումով *ունիվերսալ*, պարզապես մարդկային հետաքրքրությունների միջակայքերում, որտեղ կարելի է ներկայանալ ու իրացվել սեփական անհատականության, այլ՝ ոչ բացառապես սեռային պատկանելության դիրքից: Նշված պրոբլեմը հետազայում ազդում է նաև ընտանիքում կին-տղամարդ հարաբերությունների կառուցման վրա, որտեղ հաղորդակցումը կամակերպվում է նորից գլխավորապես սեռային պատկանելության, այլ՝ ոչ անհատականության հարթություններում: Նման հաղորդակցումն էլ բնականաբար մեծացնում է ենթակայական համակեցության մոդելի գերակայությունը համագործակցայինի հանդեպ, մեծացնելով ընտանիքներում կոնֆլիկտների ձևավորման հավանականությունը: Հատկանշական է, որ նման դեպքերում կոնֆլիկտի լուծման եղանակն էլ առավելապես մի կողմը մյուսին ենթարկվելու միջոցն է, այլ ոչ թե բանական դատողության սկզբունքով կառուցվող և ռացիոնալ փաստարկման հիմքի վրա համաձայնության կայացումը (Ռացիոնալ փաստարկումը այստեղ օգտագործվում է որպես եզր և համապատասխանում է Յու.Հաբերմասի տված բովանդակությանը և դիսկուրսում դրա ուեցած դերին: Տես՝ Habermas 1993):

Եզրակացություններ և առաջարկություններ

Վերլուծության արդյունքում կարելի է անել հետևյալ եզրակացությունները.

- Հայաստանյան հասարակությունում գենդերային անհավասարության հիմնական պատճառները մշակութային հարթությունում են և արտացոլված են տղամարդու և կնոջ հանգուցային նշանների գերակա տիպերում: Դրանք դրսևորվում են առօրյա պրակտիկաների մակարդակում, որոնց միջոցով հանգուցային նշանները ռեպրեզենտացվում են հանրային միջավայրերում:
- Հայաստանյան հասարակությունում բացի տղամարդու և կնոջ հանգուցային նշանների գերակա տիպերը, առկա են նաև հանգուցային նշանների տարատեսակներ, որոնք ի տարբերություն գերակա տիպի, ավելի հեշտ փոփոխելի են:
- Կին – տղամարդ հանգուցային նշանները «փակ» չեն մեկնաբանությունների համար: Ճիշտ է դրանք բավականին պահպանողական են, սակայն դոգմատիկ չեն և չեն սահմանափակված դոգմատիկ բնույթի ավանդույթներով: Սա նշանակում է, որ նույնիսկ խիստ ավանդույթային միջավայրերում հնարավոր է տղամարդու և կնոջ հանգուցային նշանները փոփոխությունների ենթարկել, աստիճանաբար փոխելով դրանց բովանդակությունները ձևավորող էկվիվալենտները: Էկվիվալենտների փոփոխությունը կարող է նաև ազդել ֆոնային ակնկալիքների վրա և նպաստել դրանց փոփոխությանը, որոնք էլ կարող են ազդել գենդերային վարքագիծը պայմանավորող առօրյա պրակտիկաների վրա (տարածական, ժամանակային, ժամանացի, հագուստի, սննդի, միջանձնային հարաբերությունների, աշխատանքի, խոսքի փոխանակման և այլն):
- Հանգուցային նշանի գերակա տիպի և նրա էկվիվալենտների ազդեցությամբ ձևավորվում է գենդերային անհավասարությունը, որը դրսևորվում է սեռերի վերքագիծը պայմանավորող ֆոնային ակնկալիքների և առօրյա պրակտիկաների ձևով:
- Գենդերային անհավասարության ու բռնությունների հիմնական պատճառները ոչ այնքան տղամարդ–սուբյեկտ և կին–օբյեկտ փոխհարաբերությունների տիպի մեջ է թաքնված, որքան գենդերի ավանդութային և լուսավորչական մեկնաբանությունների հարթությունում: Ավանդութային մեկնաբանության համատեքստում տղամարդն ու կինը երկուսն էլ գտնվում են օբյեկտային վիճակում և ավանդույթների իշխանության տակ են հավասարապես: Այստեղ անհատն ընդհանրապես չի կարող սուբյեկտի կարգավիճակ ունենալ:

Սուբյեկտի կարգավիճակ կարող է ունենալ միայն խումբը, իսկ նրա բոլոր անդամները օբյեկտային կարգավիճակում են: Դա ճնշում է կանանց ու տղամարդկանց իրենց սեռականությունը սեփական անհատականությունից բխեցնելու և այդ հիմքի վրա կոմունիկացվելու հնարավորությունը, թույլ չտալով նման բովանդակությունը ռեպրեզենտացնող պրակտիկաների արտադրությունն ու տարածումը համահասարակական լայն միջավայրերում:

- Չնայած դրան հայաստանյան հասարակությունում կան սեռականությունը ցուցող հանգուցային նշանը սեփական անհատականությունից բխող բովանդակությունների միջոցով կառուցելու և ռեպրեզենտացնելու հանրային նոր միջավայրերում ավանդականից ազատ, անհատական պրակտիկաների միջոցով: Սա կարևոր է, քանի որ ցույց է տալիս, որ հետխորհրդային հայաստանյան հասարակությունը ունի արդիականացման ու լուսավորվելու պոտենցիալ:
- Հատկանշական է, որ ավանդականից անհատականի ազատագրման այս պրոցեսը հանգեցնում է նաև հանրային նոր միջավայրերի ձևավորման, որտեղ կանայք կարող են ներկայանալ ու իրացվել որպես անհատներ: Սա ես ձևակերպել եմ որպես ապատարածականացման (դետերիտորիզացման) գործընթաց, որի միջոցով խմբային վերահսկողության տակ գտնվող մասկուլինային հանրային միջավայրերը աստիճանաբար ապատարածականացվում են և ապասեռականացվում կամ սեռային առումով ունիվերսալացվում են հոգուտ կանացի, տղամարդկային կամ այլ սեռականություններ ունեցողների անհատականության ռեպրեզենտացման և իրացման պրակտիկաների: Սա իր հերթին կարող է առաջացնել նոր տիպի կոմունիկացիա և նպաստել հանրային միջավայրերում կին – տղամարդ կոմունիկացիոն նոր հարթակների ձևավորման:
- Կին – տղամարդ կոմունիկացիան հանրային միջավայրերում բավական սահմանափակ է: Հանրային հարթակներում ընթացող կոմունիկացիան գլխավորապես ունի մասկուլինային բնույթ: Այսինքն, տղամարդիկ են համարվում կոմունիկացիայի հիմնական մասնակիցներ և միայն նրանք տեղ ունեն հանրային միջավայրերում: Այդ պատճառով էլ հանրային միջավայրերում կանանց մուտքը, հատկապես մարզերում և Երևանի ծայրամասերի բնակչության մեջ խստորեն սահմանափակված է: Կոմունիկացիոն նման դեֆիցիտային պայմաններում կին – տղամարդ կոմունիկացիան իրացվում է գերազանցապես գերակա հանգուցային նշանների ռեպրեզենտացման կոնտեքստում: Այսինքն, կին – տղամարդ միակ կոմունիկացիոն հարթակը

ընտանիքն է, որտեղ նրանք շփվում են բացառապես հանգուցային նշանին ավանդույթի կողմից տրվող էկվիվալենտների շրջագծում: Այստեղ կնոջը վերապահված է ամուսնու խոսքին հնազանդ, երեխաներին խնամողի և կերակրողի բովանդակությունը, իսկ տղամարդուն ընտանիքը կերակրողի և կնոջն իր հնազանդության տակ պահողի: Ահա, թե ինչու հայկական ընտանիքներում գերակայում է ենթակայական համակեցության տիպը այլ՝ ոչ համագործակցային, ինչն էլ դառնում է անհավասարության ու բռնության համար բարենպաստ պայման: Խնդիր է նաև այն, որ կնոջ և տղամարդու հանգուցային նշանները ամբողջացնող էկվիվալենտները ընտանիքի ներսում ենթակայական համակեցության ձևը տարածում են ոչ միայն ամուսինների, այլ՝ քույր – եղբայր, հայր և աղջիկ փոխհարաբերությունների վրա:

- Մանկուց աղջիկների ու տղաների սոցիալիզացիան ընթանում է կանանց ու տղամարդկանց աշխարհները հակադրելու ու բևեռայնորեն միմիանցից հեռացնելու տրամաբանությամբ: Սա իրականացվում է սեռահասունացման տարիքում սեռերի միջև սեփական անհատականությունը ներկայացնելու ու իրացնելու հնարավորություն տվող կոմունիկացիոն միջանկյալ հարթակների սահմանափակման ճանապարհով: Կին – տղամարդ սեռերը վեր են ածվում կոմունիկացիայի բևեռների, որոնց (բևեռների) միջակայքում համարյա թե չկան միջանկյալ կոմունիկացիոն տարածքներ:

Ելնելով նշված եզրակացություններից, կարելի է անել հետևյալ առաջարկությունները

- Գենդերային հավասարության և կանանց իրավունքների պաշտպանությանն ուղղված ծրագրերում ներառել այնպիսի գործողությունների պլան, որոնք ուղղված կլինեն կին և տղամարդ հանգուցային նշանի գերակա տիպի այս կամ այն էկվիվալենտի փոփոխությանը: Խոսքը վերաբերում է հատկապես այնպիսի էկվիվալենտներին, որոնք սեռերի հաղորդակցման մակարդակում վերարտադրում են անհավասարության և ենթակայության պրակտիկաներ: Ասենք օրինակ, տղամարդուն բնութագրող «իր խոսքը մինչև վերջ տանող լինելը» էկվիվալենտը փոխարինել «կնոջ խոսքը լսող և հարգող լինելը» էկվիվալենտով:
- Նույնը կարելի է անել խմբիշխանական էկվիվալենտները անհատակենտրոն էկվիվալենտներով փոխարինելու հարցում: Ասենք օրինակ, «Լավ կինը պետք է ամուսնուն ու նրա ընտանիքին հարմարվող լինի» փոխարինել «լավ կինը պետք է խելացի ու ինքնուրույն անհատականություն լինի»:

- կարևոր խնդիր է տղամարդու և կնոջ հանգուցային նշանները ձևավորող էկվիվալենտների բևեռայնությանը հաղորդել ունիվերսալ բնույթ, հիմք ընդունելով ոչ թե սեռային պատկանելության, այլ՝ մարդկային գործոնը: Ասենք, օրինակ, բարությունը ոչ թե համարել նրբություն ու դիտել որպես կանացիության էկվիվալենտ, այլ՝ համարել որպես մարդկային և դիտել որպես և տղամարդկության և կանացիության էկվիվալենտ: Նույնը կարելի է ասել զիջողականության, նրբանկատության, բարեկրթության, ներողամտության և շատ այլ մարդկային հատկանիշների մասին, որոնք նշաժս հասարակական միջավայրում ընդունված է համարել ավելի շատ կանացիության, քան տղամարդկության էկվիվալենտներ: Նման ունիվերսալ էկվիվալենտների թվաքանակի ավելացումը կարող է հակակշռել բևեռային, միմիանց հակադիր բնույթ ունեցող էկվիվալենտներին և նպաստել նաև կանանց ու տղամարդկանց աշխարհների միջև հաղորդակցման հիմնախնդրի կարգավորմանը:
- նույն խնդիրը կարելի է լուծել առօրյա պրակտիկաների ունիվերսալացման ճանապարհով, աստիճանաբար կրճատելով հագուստի, սննդի, տարածության ու ժամանակի կազմակերպման, խոսքի փոխանակման և այլ պրակտիկաների միջև տղամարդկային ու կանացի համարվող պրակտիկաների թիվը մուտքագրելով ունիվերսալ պրակտիկաներ:
- էկվիվալենտների տրանսֆորմացման գործընթացում շատ կարևոր է, որ դրանք գործող էկվիվալենտներին կոշտ հակադրության ձևով, որպեսզի չառաջացնեն հասարակության պահպանողական խավերի դժգոհությունն ու դիմադրությունը: Դա կարելի է անել փափուկ ձևով, հաճախ դրանք ներկայացնելով ոչ թե առաջին պլանում, այլ՝ ֆոնային:
- Կարևոր է նաև ծրագրերում ներառել սեռերի միջև կոմունիկացիոն հարթակների ընդլայնումը, հատկապես սեռերի սոցիալիզացման դեռահասության տարիքում, երբ տղաների ու աղջիկների հաղորդակցումը աստիճանաբար կրճատվում է և բևեռացվում: Կարևոր է կոմունիկացիոն այնպիսի հարթակների ստեղծումը, որոնք կնպաստեն անհատականության հիմքի վրա սեռերի հաղորդակցման մշակույթի ձևավորմանը: Ասենք օրինակ, ֆիլմերի դիտում և քննարկումների կազմակերպում: Էկոլոգիական կամ համայնքի զարգացմանն ուղղված ծրագրեր, որտեղ տղաներին ու աղջիկների համար նախատեսված են միանման ու հավասար աշխատանքներ ու դերակատարումներ: Ասվածը, խիստ ակտուալ է հատկապես մարզերի համար: կարևոր է սեռահասունացման տարիքում սեռերի միջև կոմունիկացիոն այնպիսի հարթակների ձևավորումը, որոնք կնպաստեն անհատականության

ու մարդկային զարգացմանը և այդ հիմքի վրա սեռերի հաղորդակցման մշակույթի ձևավորմանը, ինչը կօգնի հակառակ սեռի ներկայացուցչին սեռային պատկանելության միջոցով նույնականացնելուն, զուգահեռ տեսնել ու կարևորել նրա մեջ մարդ անհատին: Սեռերի միջև մինչամուսնական տարիքի հաղորդակցման հարթակները աշխուժացումը կարող է նպաստել փոխհարաբերության բևեռային ու ենթակայական բնույթի մեղմանը և այդ բեռը ընտանիքի վրայից թեթևացնելուն:

- Կարևոր է մարզերում հանրային միջավայրերի ունիվերսալացմանն (ապասեռականացմանը) ուղղված քայլերը: Կարևոր է հատկապես հանրային տարածքների տղամարդկայնացման հաղթահարումը: Ամպայման չէ, այդ քայլերն արվեն հակադրության ճանապարհով: Այսինքն, փորձ արվի ներթափանցելու խիստ ավանդական տղամարդկային միջավայրեր: Կարելի է սկզբում ձևավորել նոր միջավայրեր, իսկ հետագա փուլերում նոր միայն մուտք գործել ավանդականորեն տղամարդկային համարվող հանրային միջավայրեր:
- Շատ կարևոր է նոր սերնդի լուսավորմանն ուղղված միջոցառումները: Այսինքն ավանդության ճանաչողական մոդելի փոխարինումը արդիականով: Դա հիմնականում աշխարհաճանաչողության մեթոդաբանական փոփոխությանը վերաբերող խնդիր է, որի հիմնական բովանդակությունն այն է, որ խմբային ճշմատությունների մեխանիկորեն յուրացումն ու տարածումը փոխարինվեն ճշմարտությունների մասին բանականության հիմքի անհատական դատողություններ անելու ունակության ձևավորմամբ:

Օգտագործված գրականություն

1. Բարսյան Ն. 2014. «Կարող է ԱԺ-ի կեսը կին լիներ, բայց՝ ծեծել է, ուրեմն կինն արժանի է մտածելակերպով» <http://www.aravot.am/2014/09/30/501652/> Վերջին դիտումը 30.09.2014
2. Գաբրիելյան Մ. 2014 <http://ysu.am/files/hnqի վրա աշխատող կինը.pdf>. Վերջին դիտումը 26.12.2014
3. Լալայան Ե. 1983. Ջավախք, Երկեր, հ 1, Երևան:
4. Լալայան Ե. 1988. Արցախ (Վարանդա և Գանձակի գավառ), Երկեր, հ 2, Երևան:
5. Լալայան Ե. 2004. Բորչալուի գավառ, Երկեր, հ 3., Երևան:
6. Ծատուրյան Ռ. 2014a. Գենդերային դերերը ՀՀ տարրական դպրոցի դասագրքերում http://www.osf.am/wp-content/uploads/2014/01/Gender_roles_in_primary_school_textbooks-2012.pdf. Վերջին դիտումը 26.12.2014:
7. Ծատուրյան Ռ. 2014b. Վերծանելով կնոջը արդի հայ քաղաքական դիսկուրսում [http://ysu.am/files/կնոջը արդի հայ քաղաքական դիսկուրսում.pdf](http://ysu.am/files/կնոջը_արդի_հայ_քաղաքական_դիսկուրսում.pdf) Վերջին դիտումը 26.12.2014:
8. Ծատուրյան Ռ. 2013. Գենդերային խնդիրները մանկավարժական (Դասախոսների ուսուցիչների և ապագա մանկավարժ ուսանողների) միջավայրում http://www.osf.am/wp-content/uploads/2014/01/Policy_paper_Ruzanna_Tsaturyan.pdf Վերջին դիտումը 26.12.2014:
9. Կոչոյան Ա., Գևորգյան Ա. 2014. Առնականությունն ու գենդերային բռնությունը հայկական սերիալներում <http://ysu.am/files/Reserch%20paper%2003.09.2014..pdf> Վերջին դիտումը 26.12.2014:
10. Նահապետյան Ռ. 2014. Աղձնիքահայերի ընտանիքը և ընտանեկան ծիսակարգը, Երևան:
11. Варданян Л. 1981. Традиции мужских возрастных групп у армян в конце XIX – начале XX вв., Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 12, Երևան, 1981:
12. Քալաշյան Է. 2014. «Պետական մակարդակով ցույց տրվեց, որ կինն ամուսնու սեփականությունն է՝ ինչպես ուզի՝ կվարվի»։ Ինչու արդարացվեց բախտագուշակի Վարսիկի որդին. <http://medialab.am/news/id/6202/> Վերջին դիտումը 23.12.2014:
13. Blommaert J. 2005. Discourse: A Critical Introduction. New York: Cambridge University Press.

14. Bourdieu P. 1984. *Distinction: A Social Critique of the Judgement of Taste*. Cambridge, Massachusetts: Harvard University Press.
15. Bourdieu P. 1992. *Outline of The Theory of Practice*. Cambridge University Press.
16. Bourdieu P. 2001. *Masculine Domination*. Stanford University Press,
17. De Certeau M. 1984. *The Practice of Everyday Life*. Berkeley and Los Angeles: University of California Press.
18. Rubin G. 2011, *The Traffic in Woman*. In: *Deviations: A Gayle Rubin Reader* (Durham, NC: Duke University Press, 2012)
19. Ishkanian A. 2003. VI. Gendered Transitions: The Impact of the Post-Soviet Transition on Women in Central Asia and the Caucasus. *Perspectives on Global Development and Technology*, 2(3), 475-496.
20. Foucault M. 1998. *The History of Sexuality Vol. 1: The Will to Knowledge*. London: Penguin.
21. Foucault M. 1978. *The History of sexuality. Vol. 1. An Introduction*. New York: Pantheon House.
22. Garfinkel H. 2011. *Studies in Ethnomethodology*. Cambridge: Polity Press.
23. Habermas J. 1993. *Justification and Application: Remarks on Discourse Ethics*. Cambridge, Mass: MIT Press.
24. Holmes M. 2009. *Gender and Everyday Life*. London and New York: Routledge
25. Jorgensen M., Phillips L. 2002. *Discourse Analyses: A Theory and Method*. London-Thousnad Oaks-New Delhi: Sage Publication, pp. 42-43.
26. Simmel G. 1984. *Femail Culture*. In: *George Simmel on Women, Sexuality and Love* (ed. Oaks G.) New Haven: Yale University Press. pp. 65-101.
27. Ortner Sh. 1974. *Is female to male as nature is to culture?* In M. Z. Rosaldo and L. Lamphere (eds), *Woman, culture, and society*. Stanford, CA: Stanford University Press, pp. 68-87.
28. Ortner Sh. 1996. *Making Gender: The Politics and Erotics of Culture*. Boston: Beacon Press